8 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2017 ՈՒՐԲԱԹ 33(5481)

# Ազգ

Azg

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651

9 771829 165003 17033

## Հյուսիսային Կորեայի հարցում Չինաստանն էլ խմբագրեց կարծիքը՝ Ռուսաստանին թողնելով մենակ

Միջուկային վերջին փորձարկումներից հետո Հյուսիսային Կորեայի կոշտ դիրքորոշումն անփոփոխ է մնացել: Երկրի իշխանությունները սպառնում են ազդու հակաքայլեր կիրառել՝ գերտերությունների նոր պատժամիջոցներ սահմանելու դեպքում: Սեպտեմբերի 7-ին Վլադիվոստոկում անցկացվող Արեւելյան տնտեսական ֆորումի նիստում կորեական ճգնաժամի թեման առանցքային դեր է կատարել: Ռուսաստանը Հյուսիսային Կորեայի վարքագիծը նկատել է իբրեւ ինքնապաշտպանական քայլ, մերժել այդ երկրի դեմ հետագա պատժամիջոցներ սահմանելու՝ ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Ճապոնիայի, Հարավային Կորեայի, ՄԱԿ-ի միակամությունը: Հյուսիսային Կորեայի կարեւորագույն դաշնակից Չինաստանը սակայն կողմ է «թե՛ պատժամիջոցներին, թե՛ երկխոսությանը», հաղորդում է գերմանական հեռուստատեսությունը:

Ան. Հ.

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Եվրոպացիք նո՞ր են հայտնաբերում ճշմարտությունը Ադրբեջանի մասին

Բոլորովին պատահական չէր, որ ընդամենը 10 օրում եվրոպական երկու լրատվամիջոց, երկու տարբեր երկրներում՝ Բուլղարիայում եւ Մեծ Բրիտանիայում, բացահայտեցին Ալիեւների իշխանության միջազգային մութ գործարքների եւ արարքների էությունը. հենց այդ երկրներում է հյուսվել խարդախության, կաշառակերության, կեղծարարության եւ ահաբեկչության ադրբեջանական սարդոստայնի եվրոպական հատվածը, որի բացահայտողներն են հանդիսանում, մե՜ծ ուշացումով, բուլղարական Trud.BG կայքը եւ անգլիական հեղինակավոր The Guardian օրաթերթը: Առաջինը՝ հետաքննող լրագրող Դիլյանա Գայթանջիեւայի (Dilyana Gaytandzhieva) գրչով, երկրորդը՝ Լյուկ Հարդինգի (Luke Harding), Կաելայն Բարանդի (Caelainn Barand) եւ Դինա Նահապետյանցի (Dina Nagapetyants) համահեղինակությամբ:

Ըստ առաջին հրապարակման, որն արժեցավ հեղինակի անհապաղ ազատմանը աշխատանքից, 2012-2016 թթ.ին Ադրբեջանի պետական փոխադրողը հանդիսացող Silkway Airlines ընկերության 350 թռիչքներով, «դիվանագիտական անձեռնմխելիության» քողի տակ, օգտագործելով տարբեր երթուղիներ, բայց հիմնականում՝ բուլղարական Բուրգազը, ազերիները զենք-զինամթերք ու քիմիական նյութեր են առաքել աշխարհի մի շարք թեժ կետեր, մասնավորաբար Սիրիա, Իրաք, Աֆղանստան եւ անգամ Կոնգո, բոլորն էլ ահաբեկչական կազմակերպություններին, այդ վաճառքի, ավելի ճիշտ՝ վերավաճառքի դիմաց գանձելով միլիարդավոր դոլարներ: (Այստեղ տեղին պիտի լիներ հարց տալ մեր դաշնակից ռուսներին, որոնք գլխավոր մատակարարն են այդ սպառազինությունների. մի՞թե չգիտեին, թե ո՞ւմ են տրամադրվում դրանք եւ ո՞ւմ դեմ): Միջազգային դիվանագիտության բոլոր նորմերի խայտառակությունը հանդիսացող այդ գործարքների, ավելի շուտ մաքսանենգության որոշ փաստերին հավելյալ անդրադարձները կարելի է գտնել կողքի սյունակներում եւ հետագա էջերում:

Ինչ վերաբերում է երկրորդ՝ «Դը Գարդիանի» հրապարակմանը, ապա այն կատարում է զգայացունց բացահայտումներ, որոնք ապացուցում են, մեզ համար գուցե ավելորդ անգամ, որ ադրբեջանական պալատական էլիտան ոտից գլուխ ներծծված է փողերի լվացման, կաշառատվության, քաղաքական եւ այլ բնույթի խարդավանքներով, օգտագործելով բրիտանական քիչ հայտնի եւ ըստ ամենայնի ոչ թափանցիկ կազմակերպությունների եւ ընկերությունների խողովակները: Հետաքննական այդ հոդվածի տվյալներով, Անգլիան եւ Շոտլանդիան ադրբեջանական սարդոստայնի գլխավոր հենակետերն են, որոնց միջոցով 2012-2014 թթ.ին շուրջ 3 միլիարդ դոլարի թաքուն կամ քողարկված փոխանցումներ են կատարվել 16 հազար անգամ՝ մեծ թվով քաղաքական գործիչների, լրատվամիջոցների, լրագրողների, բժշկական ու կրթական հաստատությունների հասցեին, այդ թվում, օրինակ, Լոնդոնում հաստատված Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի բուլղարացի տնօրեն Քալին Միթրեւին (Kalin Mitrev), որի կինը, ի դեպ, UNESCO-ի տնօրեն Իրինա Բոկովան (Irina Bukova) է, որին այդ պաշտոնում այժմ հավակնում է փոխարինել Բյուլբյուլօղլին... (Սա էլ մի ուրիշ պատմություն, որին կանդրադառնանք հետագայում): Այդ փոխանցումներն անշուշտ օրինական կարգով չեն կատարվել, այլ՝ կրթաթոշակների, հիվանդանոցային ծախսերի, թանկարժեք նվերների, հյուրանոցային վճարումների, «մարդասիրական» եւ այլ ծրագրերի ֆինանսավորման եւ այլ՝ զարմանազան ձեւերով, որոնք, ըստ «Գարդիանի», ֆինանսական վերահսկողական մարմիններում ստացել են «Ադրբեջանական լաունդրոմատ» (Azerbaijani Laundromat) հորջորջումը, «լվացք» եւ «բանկոմատ» բառերի կրճատ համադրմամբ, որի թույլ եւ տկար համարժեքը հայ իրականությունում «խավիարային դիվանագիտություն» է կոչվում: Այլ խոսքով, վերոհիշյալ եւ անշուշտ այլ երկրներում գործում է մի ամբողջ բազմամարդ համակարգ, որի ստեղծման նպատակը, ըստ անգլիական թերթի, իշխանությունը պահպանելու, մամուլի եւ միջազգային տարբեր հիմնարկներում ու ֆորումներում քննադատությունից խուսափելու, մարդու իրավունքների պաշտպաններին ճնշելու համար պատժամիջոցներից խուսափելու նախագահ Ալիեւի ցանկությունն է:

Սակայն երկու լրատվամիջոցներն էլ անտեսում կամ հաշվենկատորեն խուսափում են հայ-ադրբեջանական հակամարտությունը հիշատակելուց, ինչը մեր առաջ խնդիր է դնում բազմապատկելու մեր ջանքերը արտաքին ասպարեզներում: Խնդիր՝ որով պետք է զբաղվի հայկական դիվանագիտությունը, հայկական լոբբինգը, որոնց համար այս հրապարակումները, որոնց անկասկած հետեւելու են նորերը, նպաստավոր ալիք են ստեղծում, որից պետք է կարողանանք օգտվել եւ շտկել անարդար վերաբերմունքը մեր նկատմամբ, գոնե հասարակական կարծիքի մակարդակում:

Գիտակցել է պետք, որ վերոհիշյալ ուշացած բացահայտումների համար ընտրված այս պահը բոլորովին պատահական չէ: Ադրբեջանը գոնե եվրոպական ասպարեզի վրա սկսել է կորցնել իր շինծու հեղինակությունը: Այս եւ հետագա հրապարակումներից հետո այլեւս եվրոպացի ոչ մի գործիչ չի ուզենա գործարքի մեջ մտնել Ալիեւի կլանի հետ, որն այժմ խեղդվել է նավթադոլարներից եւ «Իսլամական պետության» ու նման կազմակերպությունների ահաբեկչական հաճախորդությունից: Պետք է գիտենալ նպաստավոր քամու օգնությամբ թիավարել ճիշտ ուղղությամբ՝ դեպի ճշմարտություն եւ արդարություն:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

## Մեզնից անկախ եւ մեզնից կախված պատճառներ



Երբեմն այնպես է թվում, թե մենք մի մոլորակում ենք ապրում, մնացած աշխարհը՝ մի այլ:

Հենց թեկուզ համացանցը որ նայում ես՝ ընդհանրապես կարծես համամարդկային օրակարգից դուրս ապրենք. այստեղ ժամանակն այնպես է դանդաղում, մեր օրն այնպիսի հիմար մանրուքներով է լցված, որ ակամա սկսում ես դրա պատճառների հետեւից ընկնել; Ու մի լավ քրքրելով թեման ներսումդ՝ հասկանում ես, որ մեր առօրյան բավական գավառական է եւ տրամագծորեն հետ է մնում միջին հայի սովորական պահանջմունքներից ու հետաքրքրություններից:

Գուցե պատճառների մեջ գլխադաս է այն, որ հայը, ամենավաղնջական ազգերից մեկը լինելով, աշխարհի մերանն է եղել՝ գնացել ու շատ լավ է զգացել այլ երկրներում, սկզբնավորել եւ ձեւավորել այլ պետություններ ու ազգերի, այնտեղ զգացել իրեն ինչպես տանը՝ միշտ ունենալով ամենայն նորը իր մեջ տարրալուծելու, դրա կրողը դառնալու հակվածությունը: Ու այդպես «կանդիցիա» է կատարվել, աշխարհի հետ էլ չափվել ենք դրսին տված ու մեծության հասած անուններով՝ մեզ այդպես զգալով աշխարհաքաղաքացի, իսկ դա, հավատացեք, նախ առաջավոր մարդկության միջին պահանջերը կրողն է: Հիմա այդ զգացողությամբ հային մեր պետությունը փաստորեն առաջարկելու բան չունի՝ արտագաղթից բացի, մինչդեռ այս տեսակի հայի ներուժը կարող էր երկրին անչափելի օգուտներ բերել; Իրազեկված, աշխարհի ձեռքբերումներին տեղյակ, նորին ձգտելու շարժիչ կրող հայերին՝ ամենագավառական բարքերից, աչառու կադրային քաղաքականությունից, տգետներին ու կիսագրագետներին խրախուսելուց բացի՝ համարյա բան չի առաջարկվում, ու անգամ արդեն գաղտնի չի պահվում, որ երկրի սահմանափակ ռեսուրսն այլեւս հնարավոր չէ հետ տանալ մի քանի մարդկանցից՝ արդյունքը բավարար չափով հասանելի դարձնելով ազգի զարգացման հեռանկարի տեսակետից պիտանի շերտերին: Նրանք էլ, տեսնելով կիսագրագետների համատարած կենսունակությունը որպես իշխող, լծակների տիրապետող եւ որոշումներ կայացնող «սերուցքի», հեռանում են այնտեղ, ուր կարող են իրենց ներսի հարստությունը, գիտելիքն ու հային հատուկ պրպտումի շարժիչն ի գործ դնելով կայանալ, ապահովել իրենց ու իրենց ընտանիքների կյանքը: Չնայած դրանից ստացվում է, որ նրանք նախ կայացնում են այլ պետություններ, քանզի հարստանալու եւ կայանալու անհագ ձգտումը հայերին տարբերում է մեկնած պետությունների ծույլ ու պետության կողմից ապահովված քաղաքացիներից, դարձնում ցանկալի այդ պետությունների համար՝ ոլորտների կամ հմտությունների զարգացման գեներատոր դարձնելով մերոնց:

Փաստորեն ես նկարագրեցի արտագաղթի անատոմիան՝ մի փոքր մակերեսից ավելի խորք նայելով: Ընդ որում՝ այս բանիմաց, երկրին ու հայությանը բոլոր իմաստներով անհրաժեշտ շերտերին հետեւում է առավել լայն, առանձնապես հմտությունների ու կրթական մակարդակի չտիրապետող շերտը՝ զուտ սոցիալական պատճառներով, ու պատկերը մեր երկրի համար դառնում է առավել քան անմխիթար: Մինչդեռ հարկ էր սովորել այդ պետություններից, դողալ մասնագետի ու գիտելիք տիրապետողի վրա ու նրան բաց չթողնել՝ նրա պահանջների համեմատ հնարավորությունների դուռ բացելով:

Բայց ո՞վ պիտի բացի այդպիսի դուռ՝ ասենք Երեւանի կամ մեկ այլ համայնքի ավագանու կիսագրագետ անդամի ու նրան հրող կուսակցության երեւակայության մեջ չի տեղավորվի, որ ինքն իր տեղում չէ, եւ իր տեղում պետք է լիներ այն կիրթ երիտասարդը, որին ուրախությամբ են սպասում ասենք Կանադայում կամ Գերմանիայում:

Կիսագրագետը չի կարող գրագետ որոշումներ ընդունել, հեռանկարին նայել իր գրպանից գոնե մեկ մետր բարձրությունից, իսկ կիսագրագետների բազմությունը պետություն է կռացնում արդեն, մի քանի գրագետի արածը ջուրը լցնում, Հայաստանը զրկում գրագետ զանգվածից, այսինքն՝ ապագայից:

⇨2

## Կատալոնիան փորձում է իրացնել ինքնորոշման իրավունքը

Կատալոնիայի ղեկավար Կառլես Պուչդեմոնը ստորագրել է տարածաշրջանում անկախության հանրաքվե անցկացնելու մասին օրենքը, որն ավելի վաղ, ձայների 72 կողմ, 60՝ դեմ, 3՝ ձեռնպահ հարաբերակցությամբ, ընդունել էր Կատալոնիայի խորհրդարանը:

Մադրիդը հայտարարել է, որ կատալոնացիների ընդունած օրենքի սահմանադրականությունը կվիճարկի Իսպանիայի Սահմանադրական դատարանում:

Մադրիդում ոչ ոք չի խոսել կատալոնացիների դեմ պատերազմ սկսելու մասին, առավել եւս՝ ոչ ոք չի պատրաստվում դա անել:



Ղարաբաղյան հարց գոյություն չունի

էջ 6



«ՍԵՎ» ԹԵՀՐԱՆԸ. ՍԱՄՎԵԼ ԽԱՉԻԿՅԱՆԻ ԹՐԻԼԵՐՆԵՐԸ

էջ Գ



Ադրբեջանը Բուլղարիայի համագործակցությամբ զենք է մատակարարում ահաբեկիչներին

էջ 7

AZG NEW SHABAT.QXD 06/09/2017 21:12 Page 2



ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

## Բարիքի մը միւս երեսը

**Ճորճ եւ Ամալ Քլունի ամոլը որոշած է 2.5 միլիոն տոլար նուիրել, որպէսզի Լիբանան ապաստանած սուրիացի փախստականներու զաւակներուն համար 7 դպրոց կառուցուի, քանի որ անոնք Սուրիոյ պատերազմական վիճակին պատճառով տարիներէ ի վեր զրկուած են ուսումէ:**

**Լուրը կ՚ուրախացնէ անկասկած, քանի որ նպատակը բարի է եւ նուիրատուներն ալ համակրելի անձնաւորութիւններ են: Սակայն, երբ քիչ մը խորանանք հարցին մէջ, պիտի տեսնենք, որ երեւոյթով բարի ու օգտաշատ այս ձեռնարկին ետեւ լուրջ մտահոգութիւններ կան: Արդէն վեց տարիներէ ի վեր սահմանամերձ Լիբանան ապաստանած սուրիացի գաղթականներուն թիւը, որ մէկ ու կէս միլիոնով կը գնահատուի, կը նշանակէ որ դեռ երկար պիտի մնան այդ գաղթակայաններուն մէջ եւ Սուրիոյ մէջ իրենց տուները վերադառնալու յոյսեր չկան, ինչ որ մտածել կու տայ, թէ պատերազմին աւարտը դեռ մօտալուտ չէ, կամ պատերազմին հետքերը վերացնելն ու Սուրիոյ մէջ անոնց բնակավայրերը վերականգնելը դեռ տարիներ պիտի տեւէ:**

**Անշուշտ այս հարցին մէջ Քլունիները յանցանք չունին, քանի որ ձեռնարկը պիտի իրագործուի ՄԱԿ-ի գաղթականաց գրասենեակին եւ UNICEF-ի միջոցաւ, ինչ որ կը նշանակէ, թէ այս համաշխարհային կազմակերպութիւնները գիտեն բաներ, որ հանրութիւնը չի գիտեր:**

**Ես կը ցաւիմ ոչ միայն սուրիացի գաղթականներու խեղճ ու կրակ վիճակին համար, որոնք անբաղձալի տարր նկատուած են լիբանանցիներուն կողմէ եւ ենթակայ են տարատեսակ թշնամական վերաբերմունքի եւ նուաստացումի, այլ կը ցաւիմ Լիբանանի համար, որ իր բնակչութեան չափ ալ գաղթականներ ընդունեց, աւելի ճիշտ կ՚ըլլայ ըսել՝ պարտադրուած ընդունեց եւ կքեցաւ անոնց բեռին տակ: Նախ՝ կէս միլիոն պաղեստինցի ու հիմա ալ մէկ ու կէս միլիոն սուրիացի...**

**Լիբանան փոքր երկիր է, սակայն «Միջերկրականի հարսն» է ու գոհարը, բայց ակամայ միջպետական խաղերու եւ դաւերու ալ թատերաբեմ դարձած է, որոնք կ՚աղօտեն անոր փայլքը:**

**Վերադառնալով Քլունիներու բարեսիրական այս ծրագրին, պիտի ըսէի, որ աւելի լաւ չէ՞ր ըլլար, եթէ այդ գումարը տրամադրուէր գաղթականներուն տուն վերադարձը իրականացնելու, քանդուած անոնց տուները վերանորոգելով եւ ապրուստի միջոցներ հայթայթելու: Խնդրոյ առարկայ գումարը մեծ բան մը չէ, սակայն տեղին ծախսուելով կրնայ կարեւոր օժանդակութիւն ըլլալ ի նպաստ սուրիացիներու վերաբնակեցման:**

**Հոլիվուտի հարուստ աստղերը յաճախ բարեսիրական նուիրատուութիւններ կ՚ընեն, յատկապէս բժշկական մարզին մէջ: Սակայն Քլունիներու այս ժեստը իւրօրինակ է. երեւի տիկին Քլունիի՝ լիբանանցի Ամալի առաջարկով եղած է: Թէ ի՞նչ տեսակ սերունդ պիտի դուրս գայ այդ դպրոցներէն, մօր կաթին հետ պատերազմի լեղին ծծած, վրանաքաղաքներու հիւղաւաններու գռիհներուն մէջ թրծուած այդ երախաներու զանգուածէն, այդ ալ ուրիշ հարց է:**

**Ամէն պարագայի, թող իրականանայ իրենց երազը բազմահազար երախաներուն ուսումը ապահովելու, մինչեւ որ ժամը հնչէ ետդարձի:**

**Թէ ո՞վ պիտի հնչեցնէ այդ ժամը, չենք գիտեր, սակայն կը մաղթենք, որ չուշանայ անոր տուն հրաւիրող ղողանջը:**

⇨1 Կիսագրագիտությունը մոտեցումների, սկզբունքների, գործելակերպի գաճաճությունն է ամեն ինչում, իսկ մեզ հսկաների առատություն է պետք՝ գավառական հայացքից ազատվելու եւ երկիրը կայացնելո՛ւ մեջ նրա բնակիչների ապահով կցությունը տեսնելու համար: Է, այսպիսի հերոսական մոտեցում մի՞թե կարելի է պահանջել ամենուր իշխող եւ ինքնասպասարկմամբ միայն զբաղվող գավառամտությունից: Ընդ որում՝ դա ամենուր է՝ թե՛ կառավարման հատկապես երկրորդ ու երրորդ մակարդակներում, թե՛ բուհերի դասավանդող զանգվածում, եւ կուսակցական վարչարար օղակներում, թե՛ անգամ լրագրության մեջ...

Ումից եւ ինչպես պահանջել այն մոտեցումները, որոնք ոչ թե զանազան խմբերին, անձերին, կլաններին են պետք, այլ Հայաստանի երեք միլիոնից արդեն պակաս բնակչությանը: Ումից պահանջել, եթե օրակարգի գլխավոր հարցը հիմա ոչ թե կամքի որոնումն է, այլ ընդամենը... անփոխարինելիության ամրապնդումը մինչեւ օր ծերություն:

նախապատրաստվում հոկտեմբերին: Ուրեմն նոր ուժով ստիպված պիտի ուղեղ ու մարմին շարժենք՝ մեզանից անկախ մատուցված այդ իրավիճակի համար լրացուցիչ ջանքեր գործադրելով:

Խոսքը համաեվրոպական թերթերի ընկերակցության բացահայտած կոռուպցիոն սխեմաների մասին է, որ գործադրել է Ալիեւների կլանը՝ իրենց հարցերն առաջ տանելու համար ահռելի գումարներով միջնորդավորված կաշառելով եվրոպական չինովնիկներին:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում հայաստանյան պատվիրակության ղեկավար **Արփինե Հովհաննիսյանը** չի բացառում, որ Ադրբեջանի նախագահի ընտանիքի մասին սկանդալային հրապարակումից հետո ԵԽԽՎ-ում ադրբեջանական պատվիրակության լիազորությունների դադարեցման հարց բարձրացվի:

Հասկացանք, որ շատ գործ ունեն Հայաստանի տարբեր կառույցներն այս առումով՝ տիրապետած սեփական տեղեկատվությունը ի ժամանակի եւ ի տեղի եվրոպացիներին մատուցելու եւ մեր խնդիրներն առաջ

### Իսկ սրան պատրա՞ստ ենք

Մեզանից անկախ պատճառներով՝ մեր խնդիրները նորովի դիտարկելու հնարավորության ամենակարկառուն օրինակը էլի վերջին օրերին էր:

ԱՄՆ-Ռուսաստան հերթական սրացմանն է դա վերաբերում, որը շատ առումներով դեռ կարող է գալ ու կպչել Հայաստանին, քանի որ Էս երկու պետությունների տարածաշրջանային շահերի կիզակետում ենք:

Որ **Պուտինն** ասում է, թե հակամարտ գոտիներ զենք մատակարարելը չի նպաստում խաղաղությանը, առաջին միտքն ի պատասխան հայկական ուղեղներում ծագում է ինքնաբերաբար՝ բա Ադրբեջանին ռուսական զենքի մատակարարո՞ւմը: Ու այս իմաստով փոխարտգործնախարար **Շավարշ Քոչարյանի** միտքը, թե ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մակարդակով արժե հակամարտ գոտիներ զենքի մատակարարման էմբարգո կիրառելու ուղղությամբ աշխատել, արժե առարկայական դարձնել ու ջանքեր գործադրել: Պուտի՞նը հո իր ասածից հետ չի կանգնելու Անվտանգության խորհրդում:

# Մեզնից անկախ եւ մեզնից կախված պատճառներ

Այս բոլորը, ինչ ասում եմ, բացառապես մեզանից կախված պատճառներով վիճակ է, որը փոխելու համար առայժմ որեւէ անհատի, կուսակցության կամ կլանի ինքնակամ զոհողությունը, իսկ ավելի շուտ՝ քաղաքական կամքը չենք տեսել, եթե չասենք՝ հակառակը, համակերպվելն ու համակերպվելու կոչերն ենք տեսել:

Լավ, ամեն օր տեղի ունեցող ինքնասպանությունները ձեր հոգուն ու խղճին ի՞նչ են ասում:

Այս բոլորին զուգահեռ, մեզանից անկախ պատճառներով, աշխարհում կատարվում են բաներ, որոնք կարող են մեր ներսի վիճակը փոխելու ինչ- որ մոտիվ պարունակել, ուզո՞ւմ ենք մենք դա, թե՞ ոչ:

### Մեզանից անկախը

Չնայած Հայաստանի ներսում բարքերի ճահճացմանը՝ մենք այնուամենայնիվ, ապրում ենք ա՛յս մոլորակում, որտեղ տեղի ունեցողը մեզանից անկախ կարող է գալ ու կպչել մեզ, լավ կամ վատ փոփոխություններ բերել հայերիս: Ասենք՝ նույնիսկ Ֆլորիդային սպառնացող «Իրմա» ծովամրրիկը ու նրան օգնության հասնող «Կատյա» ծովամրրիկը միայն առաջին հայացքից կապ չունեն մեզ հետ՝ իրականում նրանք կարող են վնասել եւ զրոյացնել նաեւ ԱՄՆ-ի արեւելյան ափի հայերի բնակավայրերը, որոնք ի վերջո օգնում էին երկրում մնացած իրենց ազգականներին, իսկ դա նշանակում է այդ ազգականների ապրուստի միջոցի ոչնչացում:

Լավ, «Իրման» մեզանից հեռու է, բայց մեզ կպած Ադրբեջանի վերջին դիմակազերծումները կարող են ծովամրրիկի ազդեցությունն ունենալ այդ երկրի համար, ու մեզնից անկախ պատճառներով՝մեր գործն ակամա կրկնապատկել եւ Եվրոկառույցներում, ԵԽԽՎ-ում, ուր արդեն իսկ ԵԽԽՎ նախագահի իմպիչմենթն էր

տանելու տեսակետից: Սա մի հնարավորություն է, որ եկել է հայերիս դուռը, երբ մենք մեզ համար նստած էինք, ու սա ճիշտ չօգտագործելը կլինի, մեղմ ասած, անբաշարություն: Մանավանդ, որ այժմ տարբեր երկրներում կսկսեն հետաքննել, թե իրենց պաշտոնյաներն արդյո՞ք կապ են ունեցել բացահայտված կոռուպցիոն սխեմաների հետ, ու տեղին կլինի նրանց հիշեցնել զանազան միլիցամարկովիչների մասին, ինչպես նաեւ բացահայտելու Ադրբեջանի հակամարդկային դեմքը Արցախի խնդրի հետ կապված: Կամ գոնե պետք է ամեն առիթով հիմա տեսանելի դարձնել, որ Հայաստանն այդպիսի կոռուպցիոն սխեմաների երբեք չի դիմում:

«Ալիեւի լվացքատունը», ինչպես որ անվանել է եվրոպական թերթերի ընկերակցությունն իր հետաքննությունը, փաստորեն, բացահահայտելով ալիեւյան կոռուպցիոն սխեմաները՝ բացահայտել է նաեւ Եվրոպայի կոռումպացված չինովնիկների դեմքը, ապտակ հասցնելով Եվրոպայի երեսին: Եվրոպան, պիտի որ չհանդուրժի ալիեւյան այս ողջ սկանդալը,մինչեւ վերջ գնա՝ կոռումպացվածներից ազատվելու համար, եթե մտածում է իր չհեղինակազրկվելու մասին: Գումարած՝ մարդասպան Ռամիլ Սաֆարովի համար Հունգարիային վճարված յոթ մլն դոլարը:

Հիմա բոլոր եվրոպական երկրները կարող են սկսել հետաքննել՝ կապվա՞ծ են իրենց տեղական գործիչները ադրբեջանական կոռուպցիոն սխեմային, թե՞ ոչ, ինչպես որ Լիտվայի Սեյմի հակակոռուպցիոն հանձնաժողովն է հիմա անում: Այնպես որ Ալիեւն ու Ալիեւան մեր սահմանները լարված պահելու փոխարեն, թող այս միջազգային խայտառակությամբ զբաղվեն, որը բացահայտում է այդ երկրի միջնադարյան կերպարը:

### Սրան ինչ ասենք

Ամեն օր սարսափով բացում եմ լրահոսը՝ սրտի դողով սպասելով, թե էլ որ տարածքում բռնկված հրդեհի մասին կկարդամ: Մի ժամանակ այդ հրդեհները «բռնկվում» էին հեռուստաաշտարակի մոտիկ անտառում, բուսաբանական այգում ու էլի այն կանաչ տարածքներում, որի վրա աչք ունեին սննդի օբյեկտ տեղադրելու ախորժակ ունեցողները: Ու լրագրողներս սանիտարի պես վրա էինք հասնում՝ հրապարակմամբ փորձելով փակել առաջին հերոստրատների ախորժակը: Ինչ մեղքս թաքցնեմ՝ ես էլ բնապահպան **Կարինե Դանիելյանի** նման կասկածներ ունեմ ներկա հրդեհների բնական ծագման վերաբերյալ: Օրինակ՝ եթե Բյուրականի՝ հանքակից ծառերի հրդեհի մասին ահազանգ է եղել՝ պիտի ստուգվեր, միգուցե հետագա հրդեհն այդպիսով կանխվեր: Ինչպես որ բնապահպաններն են կասկածում՝ որեւէ գործունեության ընդլայնման նպատակով չարամիտ հրդեհները չի կարելի բացառել, այ, եթե մի լավ հետաքննվի ու պարզվի, որ մարդկային գործոնը դեր չունի Խոսրովի անտառի, Բյուրականի հրդեհի հետ՝ միգուցե մեզ մոտ կասկածները վերանան:

***Եզրակացություն. Վերադառնանք մեր նյութի սկզբին: Մեզանից անկախ պատճառներով մեզ կարող են մատուցվել միջազգային տարբեր հնարավորություններ ու պատեհություններ, որոնցից արդյունավետ օգտվելու հնարավորությունը մեր երկրի ներքին մթնոլորտի փոփոխությունը, մեր ներսի տաղանդավորներին ճանապարհ տալն ու Հայաստանում իշխող մտայնության վերբեռնումն է՝ դեպի գրագետ ու ներքին կոռուպցիաներից զերծ հասարակություն:***

# Հայաստան- փոքր, հոյակապ երկիր

***Դանիայից մեր հայրենակից Անահիտ Կարապետյանը «Ազգ»ին է ուղարկել, իր թարգմանությամբ, հետեւյալ գրությունը, որի հեղինակը Դանիայի մշակույթի եւ եկեղեցու հարցերով նախարար Մեթթե Բոքն է:***

Եթե դժվարանում եք հասկանալ մշակույթի, լեզվի եւ պատմության նշանակությունը երկրի եւ բնակիչների համար, այցելեք Հայաստան կամ խոսեք այդ մասին Դանիայում բնակվող հայերի հետ:

Երեք գերծանրաբեռնված օրերից հետո Հայաստանից վերադարձել եմ Դանիա: Հայաստանն աշխարհի առաջին քրիստոնյա երկիրն է, սեղմված Վրաստանի, Ադրբեջանի, Պարսկաստանի եւ Թուրքիայի միջեւ... Երկիրը մինչ օրս զգում է ռուսական սառը շունչը:

Հայերի պատմությունը՝ ամուր ինքնություն ունեցող ազգի պատմություն է:

Երկիրը շատ աղետներ է տեսել:

Պատերազմներ, բռնագրավումներ, թուրքերի կողմից աքսորներ եւ սպանություններ՝ հարյուր հազարավոր հայերի հանդեպ 1915-17 թթ., եւ այլն:

Բայց միեւնույնն է, երկիրը շարունակում է գոյություն ունենալ:

Իր լեզվով, գրերով եւ ամուր հավատքով աշխարհի այն տարածաշրջանում՝ որտեղ գերակշռող մասը մահմեդականներ են:

Երկրի հարուստ պատմությունն ու մշակույթը սերնդեսերունդ պատմվում եւ փոխանցվում է:

Այսօր Հայաստանից դուրս ավելի շատ հայ է ապրում, քան Հայաստանում, մոտավորապես 3 միլիոն:

Բայց հայերը շարունակում են մնալ միասնական:

Ամուր ազգ՝ լի հույսով եւ հավատով դեպի ապագան:

ՄԵԹԹԵ ԲՈՔ

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# ՆԱՏՕ-ի հետ մեր «խաղերը» եւ Հայաստանի ռազմավարական դաշնակիցը

## *Կամ «այն ինչ կարելի է Զեւսին, չի կարելի եզին»*



Agile Spirit 2017 էկզոտիկ անունը կրող, հարեւան Վրաստանում ՆԱՏՕ-ի զորավարժություններին մասնակցելուց Հայաստանի հրաժարվելը հայկական քաղաքական եւ լրատվական դաշտում բարձրացված հերթական փոթորկի պատճառ դարձավ: Բնականաբար, մեկնաբանություններում գերակշռում էին շահարկումներն ու ենթադրությունները եւ դրա հիմնական մեղավորը ՀՀ պաշտպանության նախարարության տարօրինակ պահվածքն էր: Միայն մեկ օր առաջ պաշտպանական գերատեսչությունը հայտարարում է, որ Հայաստանը չի մասնակցելու այդ զորավարժություններին, իսկ մինչ այդ բոլորին հայտնի էր, որ պետք է մասնակցենք: Այդպես էլ մինչեւ վերջ պարզ չդարձավ՝ մեր երկիրը նախապես համաձայնվել էր մասնակցել, հետո հրաժարվե՞լ, թե՞ չի եղել ոչ մի նախնական համաձայնություն: Ամեն դեպքում, այս ամենից ինչ-որ օբյեկտիվ եզրակացություններ կարելի է անել:

Առաջինը, որ եթե Հայաստանը նախապես համաձայնություն տված էլ չլիներ այդ զորավարժություններին իր մասնակցելուն, ապա որոշակի նախնական պայմանավորվածություն եղել է: Հակառակ դեպքում, նման պատկեր, հետեւաբար եւ շահարկումների համար լայն դաշտ չէր ստեղծվի:

Երկրորդը, Հայաստանը ինչ-որ մի պահի հրաժարվել է այդ զորավարժություններին մասնակցելուց եւ հայտնի չի, թե այդ պահը ե՞րբ է եղել: Այս առնչությամբ, պաշտոնական մոտեցումներից մեկն այն է, որ Հայաստանը հրաժարվել է մասնակցել, երբ հայտնի է դարձել, որ այդ զորավարժություններին մասնակցելու է նաեւ Ադրբեջանը: Եթե նկատի ունենանք, որ նախորդող զորավարժություններին Ադրբեջանը չէր մասնակցում, իսկ Հայաստանը մասնակցում էր, ապա այս մոտեցումը կարող է հիմնավոր լինել: Սակայն, արեւմտապաշտների ամբոխը առիթը չկորցնելով, անմիջապես զանգվածային քարոզչական հիստերիա սկսեց՝ Ռուսաստանի կողմից Հայաստանի նկատմամբ ճնշումների կիրառման հետեւանքով մեր հրաժարվելու փաստը մեկնաբանելով: Որքանո՞վ է դա իրատեսական:

Իսկապես հնարավոր է, որ Ռուսաստանը ճնշում գործադրած լինի Հայաստանի նկատմամբ: Ռուսաստանն այս տարածաշրջանում հիմնական խաղացող գերտերությունն է եւ նրան նյարդայնացնում է ՆԱՏՕ-ի կողմից արդեն նախկին Խորհրդային Միության տարածքում զորավարժությունների անցկացման փաստը: **Այն բանից հետո, երբ ՆԱՏՕ-ն «կլանեց» Արեւելյան Եվրոպան եւ ընդհուպ մոտեցավ Ռուսաստանի սահմաններին, նման յուրաքանչյուր զորավարժություն Ռուսաստանն ընկալում է որպես իր դեմ ուղղված մարտահրավեր եւ սպառնալիք՝ իր անվտանգությանը: Այս կացության մեջ Ռուսաստանի ռազմավարական դաշնակից Հայաստանը մտադրություն է հայտնում մասնակցելու նման զորավարժություններին: Բնական է, որ դա առաջացնելու է Ռուսաստանի հակազդեցությունը եւ հավանական է, որ Հայաստանի իշխանության նկատմամբ ճնշումներ գործադրվեն:** Պարզապես մեր հանրության մի հատվածի կողմից նման պարագայում խոսում են Հայաստանի «գաղութ» լինելու մասին, իսկ երբ ամեն օր ու ամեն վայրկյան ԵՄ եւ ԱՄՆ կողմից պարտադրված պահանջներ են կատարվում, հայտարարվում է Հայաստանում «ժողովրդավարության եւ մարդու իրավունքների ոլորտներում արձանագրված առաջընթացի» մասին:

Կանխատեսելի է նաեւ հարցը. եթե ռազմավարական դաշնակից ենք Ռուսաստանի հետ, ապա ինչպե՞ս է Ռուսաստանը զենք մատակարարում մեր թշնամուն, ինչը անշուշտ Հայաստանի շահերին է դեմ: **Բազմիցս ասել ենք, որ Ռուսաստանը ոչ միայն զենք է մատակարարում Ադրբեջանին շուկայական գներով եւ Ադրբեջանը ունի այդ գներով ձեռք բերելու հնարավորությունը, ապա Հայաստանին զենք մատակարարում է անհամեմատ էժան գներով, որոշ դեպքերում էլ պարզապես անվճար, չխոսելով այն մասին, որ Մոսկվան Ադրբեջանի հնարավորությունները չունեցող Հայաստանին էժան վարկ է տրամադրում իրենից դարձյալ էժան գնով զենք եւ զինամթերք գնելու համար:** Մեր «քաղաքագետները» լավ չեն հասկանում սա կամ էլ հասկանում են, բայց իրենց հիմարի տեղ են դնում հանուն հակառակ ճամբարից ստացվող վարձատրության: Նրանք նաեւ չեն հասկանում, որ այս պայմաններում Հայաստանի պես փոքր երկիրը չի կարող նույն կերպ վարվել, ինչպես Ռուսաստանի պես գերտերությունը: Այո, «այն ինչ կարելի է Զեւսին, չի կարելի եզին»: Ուզենք, թե չուզենք սա է իրականությունը:

Գերտերությունները կարող են իրենց թույլ տալ այս կամ այն կերպ վարվել, ինչը իրենց չեն կարող թույլ տալ փոքր պետությունները: Սա աքսիոմատիկ ճշմարտություն է: **Հետեւաբար, Հայաստանի՝ իշխանությունների «խաղերը» Արեւմուտքի, հատկապես ՆԱՏՕ-ի հետ, պետք է լինեն այնպես, որ չդառնան Ռուսաստանի հակազդեցության պատճառ, որի հետեւանքները շատ դառը կարող են լինել մեզ համար: Կարող ենք համագործակցել ՆԱՏՕ-ի հետ, խաղաղարար ուժեր ուղարկել Աֆղանստան, Իրաք եւ Կոսովո, բայց նախկին խորհրդային տարածքում զորավարժության մասնակցելը կարող է նման հակազդեցություն առաջացնել: Մենք ունենք նման բարդ տարածաշրջանում, շրջափակման եւ փաստացի պատերազմական իրավիճակում առաջին հերթին ֆիզիկական գոյության եւ մեր պետության պահպանման ու զարգացման մշտական եւ փոխկապակցված հիմնախնդիր եւ չենք կարող արկածախնդրությունների գնալ**: Անհեռատեսության եւ դատարկ խոստումներին տրվելու մի փուլ անցել ենք 100 տարի առաջ եւ կորցրել անկախ պետություն եւ տարածքներ: Նույն սխալը թույլ տալը պարզապես ճակատագրական կարող է լինել մեզ համար:

# Հերթը հակակարկտային ցանցերինն է

Որքա՞ն է կազմելու պետական սուբսիդավորումը եւ ի՞նչ տոկոսադրույքներով են վարկերը հասնելու գյուղացիական տնտեսություններին

Հայաստանում գյուղատնտեսության բարձր ռիսկայնության երկու գլխավոր պատճառներից մեկը կարկուտն է: Եթե երաշտի դեմ գործնականում անհնար է պայքարել եւ միայն կորուստները որոշ չափով կարելի է նվազեցնել, ապա կարկուտի վնասները հնարավոր է հասցնել զրոյի: Կարկուտի վնասների դեմ պայքարի միջոցներից բավականին բարձր են գնահատվում հակակարկտային ցանցերը: Դրանց կիրառումը զարգացած տնտեսություն ունեցող երկրներում բավականին տարածված է: Հայաստանում նույնպես դրանք կիրառվում են, բայց առայժմ փոքր տարածքների վրա: Չնայած գրեթե 100 տոկոս արդյունավետությանը, ներկայումս մեր երկրում միայն 60-70 հա տարածքներում են տեղադրված կարկտապաշտպան ցանցեր: Հիմնական պատճառը դրանց թանկ լինելն է ու գյուղացիական տնտեսությունների կողմից բավարար միջոցների բացակայությունը: Այս առումով, դրական տեղաշարժ պետք է համարել կառավարության կողմից գյուղատնտեսությունում հակակարկտային ցանցերի ներդրման նպատակով վարկերի տոկոսադրույքները սուբսիդավորելու որոշումը: Այդ նպատակով, արդեն եկող տարի նախատեսված է մոտ 700 մլն դրամ հատկացնել:

Մասնավորապես, կառավարությունը վերոնշյալ գումարն ուղղելու է վարկի՝ տարեկան 14 տոկոս կազմող տոկոսադրույքի մեծ մասի սուբսիդավորմանը, որի արդյունքում տնտեսվարողների համար վարկի տոկոսադրույքը կկազմի ընդամենը 2 տոկոս տոկոսադրույքով՝ 7 տարի ժամկետով: 700 մլն դրամ գումարով վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը հնարավորություն կտա տարեկան սուբսիդավորել 1350 հա, այդ թվում՝1000 հա խաղողի եւ 350 հա պտղատու այգիների հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրված վարկերի տոկոսադրույքը: Արդյունքում, հանրապետության այգիների շուրջ 2,4 տոկոսը կպատվի կարկտապաշտպան ցանցածածկերով, բացառելով կարկուտի ռիսկը: Միանշանակ է, որ հետագայում այս ձեւով պաշտպանված գյուղատնտեսական տարածքները անհրաժեշտ է ընդլայնել:

Պատկերացում կազմելու համար, թե ի՞նչ վնասներ է կրում գյուղատնտեսությունը կարկտահարությունից, ներկայացնենք վերջին տարիների պատկերը: 2013-ին մայիսին Արմավիրի մարզում կարկտահարության հետեւանքով 11090 հա ցանքատարածություններին, պտղատու եւ խաղողի այգիներին հասցված վնասը կազմել է շուրջ 25,3 մլրդ դրամ: 2014-ին Հայաստանի Լոռու եւ Շիրակի մարզերում վնասվել են 52 համայնքների 15101 հա ցանքատարածություններ: Վնասը՝ 6,7 մլրդ դրամ: 2015-ին կարկտահարության հետեւանքով վնասվել են հանրապետության 8 մարզի 82 համայնքի շուրջ 8,8 հազար հա ցանքատարածություններ, իսկ վնասը կազմել է շուրջ 7,8 մլրդ դրամ: 2016-ին կարկտահարությունը վնասել է 9 մարզի150 համայնքի շուրջ 23,1 հազար հա մշակվող տարածություններ, վնասը՝ շուրջ 33,6 մլրդ դրամ: Այսինքն, ըստ կառավարության ներկայացրած հիմնավորման, յուրաքանչյուր տարի կարկուտի պատճառով վնասվում են հանրապետության այգետարածքների 10-15 տոկոսը, իսկ կարկտահարված տարածքներում բերքի կորուստը որոշ դեպքերում կազմում է 80-100 տոկոս:

Կարկտապաշտպան ցանցերի ներդրման արդյունավետությունը արդարացված է նաեւ դրանց գնի եւ ներդրման արդյունքում ստացվող անկորուստ բերքի համեմատության հաշվարկներով: Համաձայն դրանց, կարկտահարությունից տարեկան բերքի 45 տոկոս կորստի դեպքում, վնասի չափը հակակարկտային ցանցերի սուբսիդավորման ծրագրի իրականացման ժամանակահատվածում (7 տարի) ավելի քան 2,6 անգամ գերազանցում է հակակարկտային ցանցի ձեռք բերման եւ տեղադրման ծախսերը, իսկ բերքի 30 տոկոս կորստի դեպքում՝ վնասի չափը շուրջ 75 տոկոսով է գերազանցում հակակարկտային ցանցերի տեղադրման ծախսերը:

Եթե նկատի ունենանք, որ գյուղատնտեսության համախառն արտադրանքի մոտ 75 տոկոսը հենց բուսաբուծության արտադրանքն է, ապա ակնհայտ է դառնում, որ այս ծրագրի իրականացումը, իսկ ապագայում նաեւ ընդլայնումը, էական ազդեցություն կունենան գյուղատնտեսության ընդհանուր ցուցանիշների վրա :

Միաժամանակ, հարկ է չմոռանալ նաեւ կարկուտի դեմ պայքարի այլ ուղղության՝ հրթիռահրետանային հակակարկտային համակարգի ներդրման մասին, աստիճանաբար ազատվելով ցածր արդյունավետություն ունեցող գազագեներատորային հակակարկտային համակարգից: Համակարգ, որի անարդյունավետ լինելու մասին բարձրաձայնել էինք դրա ներդրման առաջին իսկ տարիներից («Անտրամաբանական մոտեցում հակակարկտային համակարգի ընտրության հարցում», «ԱԶԳ», 22.07.2009 թ.):

Ա. Մ.

# Գործնական ակնկալիքներ Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովից

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ
Դետրոյթ, ԱՄՆ

Մինչ բազմաթիվ սփյուռքահայեր նախատում են Հայաստան-Սփյուռք համաժողովները, որոնց հերթական 6-րդ նիստերը կայանալու են սեպտեմբերի 18-20-ը, 1,700 հայեր աշխարհի տարբեր անկյուններից արձանագրվել են մասնակցելու դրանց: Սա նշանակում է, որ մեծ թվով հայեր արժեւորում են նման միջոցառումների անցկացումը եւ դրանց մասնակցությունը: Այնպես որ, ճշմարտությունը ինչ-որ այս երկու մոտեցումների միջեւ պետք է որոնել:

Նրանք, ովքեր կարեւոր ներդրումներ են կատարել հայրենիքում, հազվադեպ են հայտնվում այս համաժողովներում: Նրանց թվում կարելի է նշել բարեգործների, որոնք միլիոններ են նվիրել, տեխնոլոգիայի գծով մասնագետների, հաջողակ ձեռնարկատերերի, որոնք զանազան ծրագրեր են իրականացնում Հայաստանում, հարգարժան գրողների, ստեղծագործական եւ կատարողական արվեստի բնագավառների ներկայացուցիչների, որոնք համաշխարհային ճանաչման են արժանացել, հայկական ծագումով մարդկանց, որոնք կառավարական պաշտոններ են զբաղեցնում օտար երկրներում, եւ վերջապես հայտնի լրագրողների եւ հաղորդավարների, որոնք աշխատում են օտարերկրյա լրատվամիջոցներում:

Կազմակերպիչների նպատակը պետք է լինի, թերեւս, ընդգրկել այդ մարդկանց եւ ոչ թե ֆորումը բաց անել ամեն ցանկացողի առաջ: Ճիշտ է, մասնակիցները խոսում են ձեւակերպված օրակարգի հարցերի շուրջ, բայց միայն խոսում են: Եվ շատ են խոսում: Գործ անողներն են պակասում:

Չենք ցանկանում հարցը սարկազմով քննարկել, որովհետեւ իրականում մեծապես գնահատում ենք եւ արժեւորում միջոցառման անցկացումը: Խորհրդային կայսրության անկումից ի վեր Հայաստանում ապրող եւ աշխարհի տարբեր երկրներում սփռված հայերը ջանք ու եռանդ չեն խնայել իրարու ավելի լավ ճանաչելու համար եւ ստեղծելու մի ընդհանուր հարթակ համագործակցության, որի միջոցով հայրենիքը կհզորանար եւ, իր հերթին, կհզորացներ սփյուռքը՝ նպաստելով նրա ինքնության պահպանմանը: Դա է պատճառը, որ այս տարվա համաժողովի համար կազմակերպիչներն ընտրել են «Փոխադարձ վստահություն, միասնականություն եւ պատասխանատվություն» նշանաբանը, ինչը խոսում է այն մասին, որ դեռեւս անելիքներ կան այդ բնագավառներում եւ հատկապես դրանցից առաջինում:

Երկօրյա համաժողովի օրակարգը բավականին հագեցած է եւ ընդգրկում է հետեւյալ մասնագիտական բնագավառները:

1) Հայաստանի զարգացման հիմնախնդիրները, որն իր մեջ ներառում է արտասահմանյան ներդրումներ, զբոսաշրջության խթանում եւ գործարար շրջանակների համագործակցություն:

2) Հայաստանի պաշտպանական քաղաքականության առանձնահատկությունները ի դեմս ժամանակակից մարտահրավերների: Շեշտադրումը՝ հրադադարի խախտումները սահմանամերձ շրջաններում:

3) Հայաստանի արտաքին քաղաքականությունը, որի օրակարգում գլխավորապես ղարաբաղյան հակամարտության եւ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրներն են:

4) Հայապահպանության խնդիրները լեզվի, գրականության եւ մշակույթի միջոցներով:

Անհրաժեշտ է, որ սփյուռքահայերը իրազեկ լինեն Հայաստանի խնդիրներին եւ չնայած սփյուռքը ի վիճակի է լուրջ եւ նշանակալի ներդրում ունենալ հաղթահարելու համար որոշ մարտահրավերներ, այնուամենայնիվ պաշտպանության խնդիրը, լինելով կենաց ու մահու հարց Հայաստանի համար, դժվարություններ է ներկայացնում սփյուռքի համար:

Ինչ վերաբերում է արտաքին ներդրումներին, գնդակը Հայաստանի կառավարության ձեռքերում է: Հայաստանի անկախացումից ի վեր շատ սփյուռքահայեր, հայրենասիրական մղումներով, շտապեցին գործարարությամբ զբաղվել, կամ տնտեսության մեջ ներդրումներ կատարել, բայց հուսախաբ եղան ու զայրացած հեռացան հայրենիքից: Իրարահաջորդ իշխանություններ խոստացան բարելավել կացությունը, բայց ապարդյուն: Կաշառակերությունը, ԽԾԲ հասկացությունը, անարդար հարկերն ու թալանը սփյուռքահայերի հայրենասիրությունը զրոյի են հավասարեցրել կամ ֆարսի վերածել:




Արտասահմանյան ներդրումները կամ կապիտալը հայրենասիրություն չեն ճանաչում: Եթե խաղի կանոնները հավասար լինեն բոլորի համար եւ ոչ մի խմբավորում օրենքից դուրս չկարողանա գործել, ապա ոչ միայն հայրենասեր սփյուռքահայեր կարող են իրենց նպաստը բերել, այլեւ արտասահմանյան կապիտալը կարող է հոսել դեպի Հայաստան:

Դժբախտաբար, ներդրումների հարցը այնքան շատ մարդկանց է վրդովեցրել, որ դեռ երկար ժամանակ ցավալի խնդիր է մնալու ի վնաս Հայաստանի տնտեսությանը:

Համաժողովում այս բոլոր հարցերը կարող են քննարկվել, վերլուծվել եւ գուցե գտնվեն դրական ելքեր: Ինչ վերաբերում է Հայաստանի արտաքին քաղաքականությանը, Սփյուռքը պատրաստ է եւ կարող է իր նպաստը բերել՝ եթե միասնական է, կազմակերպված եւ քաղաքականացված: Մենք՝ հայերս ունենք որոշակի ռեսուրսներ արեւմտյան երկրներում, որոնք դեռ չեն օգտագործված: Հայաստանը կարող է ուղղորդել սփյուռքահայերին, բայց գլխավոր պատասխանատվությունն ընկնում է սփյուռքի առաջնորդների ուսերին, որպեսզի նրանք կարողանան միասնաբար գործել:

Բայց համաժողովի հաջողությունը չափվելու է երկու կարեւոր հարցերի շուրջ գտած լուծումներով. մշակել արտագաղթը կասեցնելու ռազմավարություն եւ կազմավորել համահայկական մի խորհուրդ՝ Հայաստանի եւ սփյուռքի ներկայացուցիչների մասնակցությամբ, որ գործնական ուղի մշակի երկկողմ վստահությունն ու համագործակցությունը վերականգնելու համար: Այլապես, ինչո՞ւ պիտի զինվորն իր կյանքը զոհաբերի մի երկրի սահմանում, որի բնակչությունը խուռներամ լքում-հեռանում է:

Թուրքիան եւ Ադրբեջանը շրջափակել են Հայաստանը եւ նրան պարտադրել աստիճանական թուլացման մի պատերազմ, որպեսզի ահ ու սարսափի մեջ պահի բնակչությանը եւ ստիպի լքել իր հայրենիքը: Իսկ կառավարությունը նպաստում է այդ մթնոլորտին՝ չկարողանալով մշակել մի արդյունավետ քաղաքականություն, որ քաջալերի քաղաքացիներին մնալու իրենց երկրում ավելի լավ ապագա կերտելու հույսով: Եթե սահմանապահ զինվորից պահանջվում է վտանգել կյանքը, եւ եթե սփյուռքահայը որոշում է ներդրում կատարել Հայաստանի տնտեսության մեջ, ապա կառավարության պաշտոնյաների պարտքն է հրաժարվել կաշառակերությունից, վերացնել անարդար հարկումները, եւ երկրում հաստատել օրենքի իշխանություն:

Թշնամին հակված է միայն քայքայելու, եւ եթե կառավարությունը վճռական գործողություններ չծավալի բոլոր մակարդակներում եւ բնագավառներում, ապա Հայաստանը չի կարող առաջքն առնել այդ քայքայման, որի մասն է կազմում բնակչության արտագաղթը: Կացությունը չափազանց լուրջ է:

Հաջորդ էական հարցը կազմավորումն է համահայկական մի խորհրդի, որը կկարողանա կարգավորել Հայաստան-Սփյուռք հարաբերությունները:

Մինչեւ օրս սփյուռքի ուժերի եւ արժեքների հայաստանյան ընկալումները շատ մակերեսային են եղել՝ հիմնված գլխավորապես սխալ անհատների եւ կազմակերպությունների վրա: Սփյուռքի իրապես գործունյա եւ առաջատար տարրերը կարող են ընդգրկված չլինեն համաժողովում, բայց Հայաստանի կառավարության պարտականությունն է գտնել նրանց եւ ապահովել նրանց մասնակցությունը:

Կառավարության ներկա կոալիցիայի իշխանության բաժանումը սխալ նախադրյալների վրա է հիմնված: Եթե միեւնույն ձեւաչափով է կազմավորվելու համահայկական խորհուրդը, ապա վստահ կարելի է ասել, որ ձախողելու է իրականացնելու իր առաքելությունը: Հաջողության բանալին ներառնվածության գաղափարի մեջ է: Բոլոր կողմերն ու խմբավորումները պետք է զգան, որ ժողովրդականություն վայելելու մրցումի չեն մասնակցում, ոչ էլ դառնալու են զոհը այլոց թելադրանքների:

Ավանդաբար նման համաժողովները զուգակցվում են ճոխ ընդունելություններով եւ խրախճանքով: Այնքան ժամանակ, որ դրանք չխանգարեն գործնական աշխատանքներին եւ առաջընթացին, համաժողովը կարող է իր առաքելությունը կատարած համարել:

Թարգմ. ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
The Armenian Mirror-Spectator

# Դեր-Զորը ազատագրված է

## *Մերձավոր Արեւելքում սկսվում է քաղաքական-դիվանագիտական մանեւրումների ժամանակը*

Սիրիական բանակը ռուսական օդատիեզերական ուժերի օգնությամբ ճեղքել է շուրջ երեք տարի ջիհադիստների ձեռքին եղած Դեր-Զոր քաղաքի շրջափակումը: Դրանից անմիջապես հետո Սիրիայի նախագահ Բաշար Ասադը հեռախոսով շնորհավորել է գործողությանը մասնակցած հրամանատարներին: Նույն օրը՝ սեպտեմբերի 6-ին, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը Ասադին շնորհավորել է գործողության հաջող ավարտի առթիվ: Պուտինը բարձր է գնահատել այդ հաղթանակը՝ դա անվանելով «ռազմավարական», որը կարեւոր քայլ է ահաբեկիչներից Սիրիայի տարածքի ազատագրման գործում:

Ի դեպ, ռուսական ԶԼՄ-ները հաղորդում են, որ քաղաքում ջիհադիստների մեջ մեծ թիվ են կազմում ՌԴ-ից եւ ԱՊՀ այլ երկրներից եկած իսլամիստները:

Դեր-Զորը ջիհադիստների կարեւոր հենակետերից մեկն է: Բացի դրանից այն գտնվում է երկրի ամենահարուստ շրջաններից մեկում, որտեղ շատ են նավթի ու գազի հանքավայրերը, որոնք սնում էին երկրի նախապատերազմյան տնտեսությունը: Նախօրեին իրաքյան բանակը ազատագրել էր Իրաքի արեւմուտքում գտնվող Թալ-Աֆար քաղաքը: Դա Իրաքում «Իսլամական պետության» ձեռքին եղած վերջին քաղաքն էր: Այժմ կարելի է հավաստել, որ տվյալ կառույցը իր վերջին օրերն է ապրում: Ինչպես գրում է իսրայելական Israel Hayom թերթը, «փլուզվում է Սիրիայում եւ Իրաքում հազարավոր կիլոմետրեր զավթած ահաբեկիչների կայսրությունը»:

Իր հերթին լիբանանյան Al Binaa հրատարակությունը ամերիկացի փորձագետների վկայակոչելով գրում է, որ տեղի ունեցավ հրաշք, քանի որ, կանխատեսումների համաձայն, Դեր-Զորի շրջափակումը վերացնելու եւ յուրայիններին միանալու համար սիրիական բանակից կպահանջվեր առնվազն երեք տարի: Հիմա արդեն պարզ է դառնում, որ Սիրիայի բանակը իր դաշնակիցների հետ շահում է պատերազմը: Չինաստանում անցկացվող BRICS-ի գագաթաժողովում **Վլադիմիր Պուտինը** նշել է, որ Սիրիայում իրադրությունը զարգանում է կառավարական զորքերի օգտին: Սիրիական բանակը մի քանի անգամ ընդարձակել է ազատագրված տարածքը, ինչը նպաստավոր պայմաններ է ստեղծում խնդրի քաղաքական-դիվանագիտական կարգավորմանն անցնելու համար:

Ռուսաստան-Թուրքիա-Իրան դաշինքը մշակում է Սիրիայում ապառազմականացված գոտիների ստեղծման հարցը: Գոյություն ունի համաձայնություն այն եռանկյան ապառազմականացման վերաբերյալ, որտեղ Սիրիան, Հորդանանը եւ Իսրայելը սահմանակցում են իրար: Առկա է հին դաշինքների եւ նորերի ստեղծման հնարավորություն, իսկ ռուսական դիվանագիտության համար ստեղծվել է քաղաքական-դիվանագիտական մանեւրման հնարավորություն: Խնդիրներ կարող են ծագել ԱՄՆ-ի հետ, որը դեռ հստակորեն չի մասնանշել Սիրիայում իր հետագա գործողությունների ծրագիրը:

Անցյալում Դեր-Զորը ուշադրություն էր գրավում նաեւ նրանով, որ սահմանակից է Եփրատի հյուսիս-արեւելքում ընկած շրջանին, որտեղ, ըստ արաբ փորձագետների, ամերիկացիները մտադրվել էին ստեղծել քրդական կազմավորում: Դատողություններ էին արվում նաեւ այն մասին, թե Իրանը ձգտում է գրավել այդ տարածքը, որպեսզի ամրապնդի «շիաների գոտին»: Խնդիրներ կան նաեւ Ռաքքայի առնչությամբ, որի ազատագրումը շատ է ձգձգվում: Թուրք փորձագետ **Աքդողան Օզքանը** նշում է, որ բարդություններ կծագեն նաեւ զինադադարի կնքումից հետո, քանի որ հայտնի չէ, թե ով է վճարելու սիրիական պատերազմի վնասների դիմաց: Պարզ է, որ Դամասկոսը միայնակ չի կարողանա վերականգնել պատերազմի վեց տարիների ընթացքում ավերված ենթակառույցը՝ դպրոցները, հիվանդանոցները, էլեկտրակայանները, ճանապարհները եւ այլն:

Հիմա գլխավորն այն է, որ Սիրիայում «Իսլամական պետությանը» հասցվել է խորտակիչ հարված, իսկ Մերձավոր Արեւելքը շրջել է իր պատմության սեւ էջերից մեկը:

Պ. Ք.

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Իսկ բանաստեղծներն ու ոստիկանները արտասվում են

Պատկերացրեք հետեւյալ իրավիճակը. խաչմերուկում, որտեղ լուսացույց չկա, մի կողմում կանգնած է ոստիկանության մեքենան, որը շտապում է՝ մեծ ձկներին գլխից բռնելու եւ ողնաշարը ջարդելու, մյուս կողմից՝ շտապօգնության մեքենան, որի անվանման մեջ ոչ շտապն է ճիշտ, ոչ էլ օգնությունը, նաեւ հրշեջ մեքենան, որն շտապում է Բյուրական՝ չմարող հրդեհը մարելու, ավելի ճիշտ՝ չի շտապում, եւ սովորական մի մեքենա, որը, սակայն, վարում է ասմունքող: Ո՞ւմ պետք է զիջեն առաջինն անցնելու պատիվը... Պարզվում է՝ ասմունքողին, քանի որ նա միակն է այս խաչմերուկում կանգնածներից, որ հայ գրականությունն է ներկայացնում, իսկ դա, հասկանում եք, լուրջ գործ է: Հավանաբար այսպես էր կարծում աշխարհահռչակ ասմունքող Լիանա Զուրաբյանը, որն ամբողջ աշխարհին ներկայացնում է հայ պոեզիան իր ողջ կրքով: Օրինակ սա.

*Կուզեմ լինել կրքիդ գերին,*
*Դու ջուր ուզես, քեզ կաթ տամ,*
*Միայն պատռիր դոշս կիսաբաց*
*Տես, թե այնտեղ ինչեր կան...*

Մի խոսքով, Լիանան ասմունքում է, ու քանի որ հրավերներ շատ ունի, նաեւ մեքենա է վարում, որպեսզի հասցնի: Մի օր էլ ճանապարհին Լիանային կանգնեցնում է պետավտոտեսուչը: Հիշո՞ւմ եք այն հին անեկդոտը, երբ Հայաստանը գնում է դեպի պայծառ ապագա ու հանկարծ պետավտոտեսուչը կանգնեցնում է... Այ, մոտավորապես այդպես էլ կանգնեցնում են Լիանային: Պարզվում է՝ կինն այնքան է տարված եղել հայ պոեզայի ընտիր գոհարների սերտման սրբասուրբ գործով, որ մոռացել է մեքենայի տեխզննման կտրոնը թարմացնել արդեն երեք ամիս: Ոստիկանը, որը իր եւ Լիանայի ողջ զրույցը տեսանկարահանում է, արձանագրում է խախտումը եւ պահանջում Լիանայի վարորդական իրավունքի տոմսը: Լիանայի ներսում ամեն բան խառնվում է իրար՝ Սահյանը՝ Իսահակյանին, Կապուտիկյանը՝ Դուրյանին, Մեծարենցը՝ Սեւակին, Չարենցը՝ ...Չէ, Չարենցը ոչ մեկին չի խառնվում, քանի որ անխառնելի է: Դեմքին տալով՝ Մայակովսկիի արտահայտություն՝ Լիանան պետավտոտեսուչին ասում է՝ «Դուք գիտե՞ք ես ով եմ»: Դե, մեր պետավտոտեսուչներն էլ, ի տարբերություն ոստիկանապետի, պոեզայի սիրահար չեն, ասմունքի երեկոներ չեն հաճախում, ինչպես 21-րդ դարում՝ շատերը, գուցե ցավոք, եւ Լիանային կանգնեցրածն էլ, անկեղծ պատասխանում է՝ «Ոչ, չեմ ճանաչում»: Կարող էր, իհարկե, պատասխանել, թե դա ի՞նչ կարեւոր է, խախտում եք արել, կանգնեցրել եմ, բայց խեղճ պետավտոտեսուչն ի՞նչ իմանար, թե ո՞ւմ է կանգնեցրել, գուցե իսկապես այնպիսի մեկն է, որի ճանապարհը չեն փակում, եթե ուզում ես, որ քոնը չփակվի: Լիանան, արդեն բարկացայտ աչքերով, ասում է՝ «Ես ասմունքող Լիանա Զուրաբյանն եմ»: Պետավտոտեսուչն առաջին անգամ է լսած լինում այդ անունը, նկատի ունեմ՝ ասմունքող եւ բնականաբար, նորից է պահանջում վարորդականը... Հետո սկսվում է իսկական ցասումը. Լիանան բռնկվում է, պահանջում տեսուչից անունը, տեսուչն էլ, թե՝ «Ես Մնացականյանն եմ», Լիանան էլ, թե՝ «Մնացականյան, նենց արա, որ տեղումդ մնաս, հանել չտամ»: Մի խոսքով, Լիանա-պետավտոտեսուչ պոեմը օվկիանոսի ալիքների պես փոթորկում է քաղաքամայր Երեւանի արեւակեզ փողոցում ու տեղափոխվում համացանց, որտեղ ոստիկանությունն՝ իր կողմից, Լիանան՝ իր կողմից, միմյանց են նվիրում անսպառ կրքի կաթիլներ, որոնք միահյուսվելով սոցցանցերի այլ օգտատերերի քահ-քահ ծիծաղին, ստեղծում են մի իսկական պոեզիայի երեկո, մի քիչ՝ անառակաբարո:

Ով չի տեսել ոստիկանների նկարահանած տեսանյութը՝ Լիանայի մասնակցությամբ, հորդորում եմ անպայման դիտել, առնվազն պոետիկ է:




Բայց մենք այս ամենի հետ կապ չունեցող բանից խոսենք: Լսո՞ւմ եք, թե ինչպես են լալիս արտասանողները, որոնք նախ եւ առաջ բանաստեղծ են ու կարողանում են աշնան մասին գրել՝ առանց աշուն բառն օգտագործելու, բայց այնպես, որ դու զգաս, թե ինչպես են թափվում անձրեւի կաթիլները վրադ եւ կամ ինչպես ես խժռում դեղձը: Ու նրանց կողքին պետավտոտեսուչները, այո նրանք, որոնք եւս մի տաբատ ունեն՝ բացի ծառայողականից, այն էլ գնել են 7 տարի առաջ, երբ ամուսնանում էին: Նրանք կան երկրում, նրանք էլ կան երկրում: Չեն հեռացել, հաճախ են մտածել հեռանալու մասին, բայց մնացել են, քանի որ երբ երկրում բանաստեղծ չկա ու օրենքի պաշտպան, երկիրն այդ անգամ փակել հարկավոր չէ. արդեն փակ է: Ու նրանք արտասվում են, քանի որ ասմունքողները պետավտոտեսուչին ասում են, որ արդեն երեք ամիս է չեն հասցնում նորացնել տեխզննման կտրոնը, քանի որ «սաղ օրը ազգի գրականություն եմ ներկայացնում», եւ որովհետեւ պետավտոտեսուչը չի պատժում օրինախախտ վարորդին, որը կարող է ասմունքող լինել, կարող է մարզպետ լինել, կարող է անգամ նախագահի աշխատակազմի ղեկավար լինել: Կապ չունի, ավելի ճիշտ՝ ունի, դրա համար էլ Լիանան ասում է, որ ինքը ազգի գրականություն է ներկայացնում, դրա համար էլ պետավտոտեսուչը չի ասում, որ դա կապ չունի:

Դրա համար էլ ոչ ազգի գրականությունն է ներկայացված, ոչ էլ երկրում օրինականությանն են հավատում, ու դրա համար էլ արտասվում են բանաստեղծները ու ոստիկանները, իսկականները, մնացածները:

Սթափվե՛ք, գժուկներ, սա պոեզիա է, սա օրենք է եւ սա երկիր է, որը չի փակվել ու չի էլ փակվելու:

# Անվանիր ինձ Վլադիմիր Մեծ

Անցնող ժամանակ ՌԴ նախագահ **Վլադիմիր Պուտինն** արեց մի շարք ցնցող հայտարարություններ: Հարկ է նկատել, որ Պուտինը հաճախ է նման հայտարարություններ անում, բայց որպես կանոն դրանք արվում են տարին մի քանի անգամ, ոչ թե շաբաթվա մեջ՝ երեքը: Ինչեւէ: ՌԴ նախագահը նախ ցնցեց ԱՄՆ-ին եւ անձամբ տիկին Մելանի Թրամփին: Պատասխանելով հարցին, թե չի՞ հիասթափվել արդյոք ինքը Թրամփից, Պուտինն ասել է. «Դոնալդ Թրամփն իմ հարսնացուն չէ, որ ես նրանից հիասթափվեմ, կամ ոչ»: Հավաքվածները բնականաբար մի լավ ծիծաղել են, անգամ նրանք, որոնց այս կատակը ծիծաղելի չի թվացել, եւ լրագրողը կոնկրետացրել է հարցը. «Պարոն նախագահ, ուղղակի հետաքրքրական է, թե ինչո՞ւ չի ստացվում արդյունավետ կառուցողական երկխոսություն Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ»: Պուտինն էլ պատասխանել է. «Գիտե՞ք, բավականին բարդ է երկխոսել նրանց հետ, ովքեր շփոթում են Ավստրիան՝ Ավստրալիայի հետ»: Հիշեցնեմ, որ այս երկու երկրները միմյանց հետ շփոթել էր ԱՄՆ նախկին նախագահ Ջորջ Բուշ կրտսերը՝ Ավստրալիայի վարչապետ Ջոն Հովարդի հետ զրուցելիս՝ 2008-ին: Իսկ, թե ի՞նչ կապ ունի Ջորջ Բուշ կրտսերը ԱՄՆ-ի ներկայիս վարչակազմի հետ, Պուտինը գիտի, եթե իհարկե նա էլ Բուշ կրտսերին չի շփոթում Թրամփի հետ:

Ավելի ուշ Պուտինից հետաքրքրվել են, թե ի՞նչ դիրքորոշում ունի Ռուսաստանը՝ Հյուսիսային Կորեայի միջուկային ծրագրի հետ կապված: Ակնհայտորեն կատակելու տրամադրված ՌԴ նախագահը պատասխանել է. «Մենք իհարկե դատապարտում ենք Հյուսիսային Կորեայի միջուկային ծրագիրը, բայց կարծում ենք, որ Փհենյանի դեմ պատժամիջոցները չեն կարող արդյունավետ լինել այս հարցում: Կարծում եմ, որ Փհենյանն ավելի շուտ խոտ կուտի, քան կհրաժարվի իր միջուկային ծրագրից: Հետեւաբար նրանց հետ պետք է երկխոսել»: Ու մինչ ներկաները պատկերացրել են, թե ինչպես է Կիմ Չեն Ընը առաջնորդում հյուսիս-կորեացիներին՝ դեպի խոտառատ դաշտավայրերը, որպեսզի այնտեղ «երկխոսի» միջուկային զենք չսիրող գերտերությունների ղեկավարների հետ, Պուտինից հետաքրքրվել են այս անգամ ուկրաինական թեմայով: Լրագրողին հետաքրքրել է, թե ի՞նչ է մտածում Ռուսաստանը՝ Ուկրաինային ժամանակակից զենքով զինելու ԱՄՆ նպատակների մասին: ՌԴ նախագահը պատասխանել է. «ԱՄՆ-ի կողմից Ուկրաինային զենք մատակարարելը էլ ավելի կվատթարացնի իրադրությունը: Մենք կարծում ենք, որ անթույլատրելի է զենքի մատակարարումը՝ հակամարտության գոտի»:

Ցավոք այդ պահին ներկաների թվում ոչ մի հայ, կամ թեկուզ ադրբեջանցի չի եղել. հետաքրքրական կլիներ նրանց... լռությունը:

Թե ինչպիսի՞ արձագանք կստանան աշխարհում Պուտինի այս հայտարարությունները, դեռ պարզ չէ, օրինակ Թրամփն ի՞նչ կասի, իսկ որն ավելի հետաքրքրական է՝ կանի՞, կամ Կիմ Չեն Ընը ե՞րբ է պատրաստվում ուղիղ եթերում, ամբողջ աշխարհի առջեւ միս ուտել եւ վերջապես պատրաստվո՞ւմ են արդյոք Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարները համատեղ հայտարարությամբ հանդես գալ, որ հայ-ադրբեջանական հակամարտություն գոյություն չունի, հետեւաբար հակամարտության գոտի չկա, եւ ուրեմն՝ Ռուսաստանն այո, զենք է մատակարարում, բայց ոչ թե հակամարտության գոտի, այլ՝ խաղաղասեր հարեւաններին՝ բացառապես խաղաղ նպատակներով, մեկին՝ հարձակողական, մյուսին՝ պաշտպանական: Մի բան է պարզ՝ Հայաստանը չի մասնակցել Վրաստանում ընթացող ՆԱՏՕ-ի՝ «Ճկուն ոգի» կոչվող զորավարժություններին եւ այդ որոշումը «ինքնիշխան երկրի որոշում է»: Փոխարենը Հայաստանը մեծ սիրով մասնակցել է Աստրախանում ԱՊՀ հակաօդային ուժերի զորավարժություններին եւ դա նույնպես «ինքնիշխան երկրի որոշում էր», այս պարագայում նաեւ՝ «մեր պետության շահերից բխող»: Այսինքն ԱՊՀ-ի եւ կամ ՀԱՊԿ-ի զորավարժություններին պարտադիր մասնակցության որոշումները ցույց են տալիս, որ մեր երկիրն ինքնիշխան է, ճիշտ այնպես, ինչպես մեր ինքնիշխանությանը ցույց են տալիս ՆԱՏՕ-ի զորավարժություններին չմասնակցելու որոշումները: Բայց այստեղ մի մանրուք կա. երբ Հայաստանը հայտարարեց, որ չի մասնակցելու ՆԱՏՕ-ի հիշյալ զորավարժությանը, ռուս փորձագիտական դաշտը անմիջապես արձագանքեց՝ նշելով, որ «Հայաստանը շատ ճիշտ որոշում է կայացրել, քանի որ ՆԱՏՕ-ի զորավարժությանը Հայաստանի մասնակցությունը դեմ է Հայաստան-Ռուսաստան համատեղ զորախմբի մասին համաձայնագրին», ինչը բոլորովին վերջերս անցավ ՌԴ-ի բոլոր օրենսդիր մարմիններով ու ստացավ Պուտինի ստորագրությունը: Այսինքն, Ռուսաստանի հետ ստեղծելով համատեղ զորախումբ՝ մենք այլեւս չենք կարող մասնակցել ՆԱՏՕ-ի զորավարժություններին, եւ դա «մեր ինքնիշխան երկրի որոշումն է»: Ի դեպ, ՆԱՏՕ-ն մեր չմասնակցությունից առանձնապես չնեղվեց. զորավարժությունների մասնակից պետությունների դրոշներից արագորեն հանվեց մերը, եւ փոխարենն ավելացվեց Ադրբեջանի դրոշը, այն պարագայում, երբ Ադրբեջանն այդ զորավարժություններին, ի տարբերություն մեզ, հրավիրված չէր: Հիմա Ադրբեջանի զինված ուժերի ներկայացուցիչներն են Վրաստանում՝ ՆԱՏՕ-ին ապացուցում, որ ճկուն ոգի ունեն, իմիջիայլոց, ճկուն ոգի՝ «հայերեն թարգմանաբար» նշանակում է՝ դուխ, ոչ այնքան զինվորների, որքան երկրի, պետության: Բայց կարող ենք հանգիստ լինել՝ ադրբեջանցիները դեռ չեն ապացուցել, ընթացքի մեջ են:

Իսկ մեզ մնում է ցնցվել Պուտինի հերթական հայտարարություններով: Ամոթ բան չէ, ամբողջ աշխարհն է ցնցվում, օրինակ, երբ Թրամփը լսել է, որ Պուտինի հարսնացուն չէ, մազերը բիզ-բիզ են կանգնել, իսկ Մելանի Թրամփը վերջին օրերին հասարակության աչքին չի երեւում, քանի որ Սպիտակ տանը նստած՝ արտասվում է: Ավելին, ԱՄՆ նախկին պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսը գիրք է գրել իր եւ Պուտինի շփումների մասին: Գրքի վերնագիրն է՝ «Անվանիր ինձ Վլադիմիր Մեծ»:

**ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ**

AZG NEW SHABAT.QXD 06/09/2017 21:12 Page 6



# Երբ թռչում են նախագահները

Հայաստանի նախագահը թռչում է Airbus A320 ինքնաթիռով: Ինքնաթիռի այս մոդելը բավականին տարածված է աշխարհում: Սերժ Սարգսյանին սպասարկող ինքնաթիռը աշխարհում այս պահին գործող 4242 Airbus A320-ներից մեկն է:

Իլհամ Ալիեւը նախընտրում է Բոինգ 767-300 մոդելը: Ինքնաթիռը կրում է «Բաքու» անունը: Ուշագրավ է, որ Բոինգ ընկերության եվրոպական մրցակիցն է համարվում Airbus-ը. փաստորեն անգամ օդում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները, գուցե ակամայից, ցույց են տալիս միջպետական հարաբերությունների բնույթը: Իմիջիայլոց Ադրբեջանի նախագահի ինքնաթիռը կարող է տանել ոչ միայն Իլհամ Ալիեւին եւ Մեհրիբան խանըմին, այլեւ հավելյալ 157 տոննա քաշ:

Բոինգի սիրահար է նաեւ Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն: Բայց ի տարբերություն Իլհամ Ալիեւի, Լուկաշենկոն ունի երկու Բոինգ. մեկը՝ 738 BBj, մյուսը՝ 767-300ER: Ի դեպ, առաջին ինքնաթիռը Լուկաշենկոն գնել է հենց կոնվեյերից. ինքնաթիռի այս մոդելը հայտնի է հատկապես իր հատուկ հարմարավետությամբ: Իսկ երկրորդը պատկանել է Թուրքմենստանի նախկին նախագահ Սապարմուրադ Նիյազովին, եւ գործող նախագահ Գորբանգուլի Բերդիմուհամեդովն այն վաճառել է Լուկաշենկոյին:

Ինքը՝ Բերդիմուհամեդովը, թռչում է Բոինգ 777-200-ով, այն շատ ավելի համեստ ինքնաթիռ է համարվում, քան Բելառուսի նախագահին վաճառվածը:

Հայաստանի նախագահի պես Airbus-ի ծառայություններից է օգտվում նաեւ Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը: Ղազախստանի նախագահի ինքնաթիռի արժեքը գնահատվում է 250 հազար դոլար: Ուշագրավ է, որ Նազարբաեւը տարվա մեջ օդում է անցկացնում ընդհանուր առմամբ միայն 6 օր:

Ղրղզստանի նախագահ Ալմազբեկ Աթամբաեւը թռչում է ՏՈւ-134-ով: Ըստ ամենայնի պարոն Աթամբաեը շուտով կկանգնի ինքնաթիռը փոխելու հարցի առջեւ, քանի որ ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուն հայտարարել է, որ հարկավոր է դիտարկել օդանավի այս մոդելը շահագործումից հանելու հարցը: Այնպես որ, եթե Մոսկվան Աթամբաեւին նոր ինքնաթիռ չնվիրի, ապա Ղրղզստանում մի քիչ կթանկանան կոմունալները:

Ուզբեկստանի նախագահ Շավքաթ Միրզիյոեւը, օրինակ, Ղազախստան ժամանել էր ճիշտ Հայաստանի նախագահի ինքնաթիռի մոդելով՝ Airbus A320-ով: Բայց Չինաստան Միրզիյոեւը մեկնել էր Բոինգ 767-300ER-ով: Սա, կրկնեմ, ինքնաթիռի ճիշտ այն մոդելն է, որը Գուրբանգուլի Բերդիմուհամեդովը վաճառել է Ալեքսանդր Լուկաշենկոյին, եւ որով թռչում է նաեւ Իլհամ Ալիեւը:

ԱՊՀ նախագահներից օդում տարբերվում են Մոլդովայի նախագահ Իգոր Դոդոնը եւ Տաջիկստանի նախագահ Էմոմալի Ռահմոնը: Երկուսն էլ նախագահական ինքնաթիռ չունեն: Դոդոնը նախընտրում է թռչել սովորական չվերթներով, ընդ որում՝ հաճախ օգտվում է էկոնոմ դասից, իսկ Ռահմոնը հրաժարվել է նախագահական ինքնաթիռից՝ երկրի բյուջեն տնտեսելու նպատակով: Բայց ի տարբերություն Դոդոնի, Ռահմոնը սովորական քաղաքացիների հետ չի թռչում, նա նախընտրում եւ օգտվում է մասնավոր ավիաընկերությունների ծառայություններից:

Եւ վերջապես Պուտինը: ՌԴ նախագահը թռչում է շատ, հեռու-մոտիկ եւ ԻԼ-96-ով, որը կոչում են՝ «Թռչող Կրեմլ»: Ինքնաթիռում կա մի քանի գրասենյակ, կոնֆերանս-սրահ, փոքր մարզադահլիճ եւ, ինչն ուշագրավ է՝ վերակենդանացման մի ամբողջ բաժին: Հարկ է նկատել, որ ՌԴ նախագահի ինքնաթիռում շեշտը դրված է անվտանգության վրա, օրինակ Պուտինի ինքնաթիռում շքեղության չես հանդիպի:

Այնպես որ, երբ Պուտինը ժամանում է որեւէ տեղ, հարկավոր է իմանալ, որ նա լավ աշխատել է, անհրաժեշտ խորհրդակցություններն անցկացրել է, կարգին մարզվել է ու անգամ վերակենդանացել է: Ինչն ի դեպ շատ կարեւոր է գերտերության ղեկավարի համար: Օրինակ Թրամփը, որն ունի երկու VC-25 մոդելի ինքնաթիռ, այս տարվա մայիսի 12-ին լուրջ փորձության ենթարկվեց: Պարզվեց, որ նրա ինքնաթիռներից մեկում կա պայթյունի վտանգ, ընդ որում ոչ թե ահաբեկիչների կողմից, այլ ինքնաթիռն արտադրող ընկերության մեխանիկների անփութության արդյունքում: ԱՄՆ առաջին ինքնաթիռին հասցված վնասը գնահատվեց 4 մլն դոլար, եւ արտադրող ընկերությունն ամբողջովին փոխհատուցեց այն:

Այնպես որ նախագահների ինքնաթիռներն ամենեւին էլ անվտանգ չեն, թերեւս այդ պատճառով էլ Նազարբաեւը տարվա մեջ միայն վեց օր է անցկացնում օդում, իսկ նախագահներ Դոդոնն ու Ռահմոնն առհասարակ ինքնաթիռ չունեն: Գուցե արդարացիորե՞ն...

Ամեն դեպքում, բարի թռիչք եւ վայրէջք, պարոնայք նախագահներ, անգամ Ձեզ, պարոն Ալիեւ:

ՆՈՎԻԿ ԱՖՅԱՆ

*Հ. Գ.- Հարկ է նկատել, որ ԱՊՀ նախագահներից ռուսական արտադրության ինքնաթիռներով թռչում են միայն Ալմազբեկ Աթամբաեւը եւ Վլադիմիր Պուտինը, բայց սա՝ իմիջիայլոց:*

# Ղարաբաղյան հարց գոյություն չունի

*(մաս 2)*

ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ

**դ.գ.թ. էներգետիկ աշխարհաքաղաքականության եւ միջազգային անվտանգության մասնագետ**

Հայկական հարցի միջազգայնացումը ժամանակակից պատմագիտությունը կապում է 19-րդ դարի վերջի ռուս-թուրքական պատերազմի, Սան-Ստեֆանոյի եւ Բեռլինյան կոնֆերանսների հետ, երբ այդ հարցը մտավ միջազգային օրակարգ: Սակայն շատ մասնագետներ, մասնավորապես պրոֆեսոր **Լենդրուշ Խուրշուդյանը**, Հայկական հարցի ծագումը կապում էր հայկական պետականության անկման հետ: Հայկական պետության կործանումը, սկզբում Բագրատունյաց Հայաստանի եւ ապա Կիլիկյան Հայաստանի կործանումը փոխեցին իրավիճակը ողջ տարածաշրջանում, եւ հայության առաջ հառնեց հերթական ու բազմաթիվ անգամ կրկնվող հարցը՝ ինչպես վերականգնել հայկական պետականությունը:

Այս հարցի բազմակրկնությունը պայմանավորված էր մեր՝ հայերի այն բացառիկ ունակության հետ, որ առաջնահերթությունից:

Ու սկսվեց պայքարի մի ժամանակահատված, որի հիմնական նպատակը հայկական էթնիկ տարրի գոյության պահպանումն էր պետականության բացակայության պայմաններում: Թուրք-սելջուկների հայտնվելը մեր տարածաշրջանում ու նրանց կողմից պետական միավորների, իսկ հետագայում ընդհանուր կայսրության ստեղծումը, նոր խնդիրներ առաջ բերեցին հայության համար: Իսլամադավան սելջուկները դարերի ընթացքում իրենց պետականության հզորացման համար վարում էին Փոքր Ասիայի բնակչության ուծացման քաղաքականություն, ինչը նրանց հարկավոր էր՝ տարածաշրջանը բնակեցնող ազգերը ձուլելու, սեփական դիրքերն ամրապնդելու, կրոնա-էթնիկական հավասարիմ տարր ստեղծելու եւ, ընդհանրապես, տարածաշրջանը յուրացնելու համար: Նկատենք, որ այս գործընթացը նրանց մոտ բավականին հաջող էր ստացվում, միակ դժվարամարս էթնիկ խումբը, որը զբաղեցնում էր տարածաշրջանում բավականին մեծ մակերեսը՝ հայերն էին, որոնց ձուլումը ընթանում էր շատ դանդաղ, Կովկասում, որտեղ թեեւ ավելի ուշ, սակայն շահական Պարսկաստանի ջանքերով հայտնվեցին թուրքախոս ցեղախմբերը: Այստեղ եւս, ինչպես եւ սպասելի էր, հայկական տարրը դարձավ դժվարամարսելի՝ եկվոր թուրքերի համար:

Իրավիճակը սկսեց փոխվել 19-րդ դարից սկսած, երբ Օսմանյան կայսրության թուլացումը թե՛ վերջինիս եւ թե՛ հայության համար փոխեց օրակարգը: Թուրքերը չկարողանալով մարսել հայկական ինքնությունը, իրենց օրակարգ մտցրեցին հայ էթնոսի բնաջնջման խնդիրը՝ որպես տարածաշրջանից հայ քաղաքակրթության ոչնչացման միակ ձեւ: Հայերն էլ , օգտվելով կայսրության թուլացումից, օրակարգ վերադարձրեցին հայկական պետականության վերականգնման հարցը:

Սակայն պետության երկարատեւ բացակայությունը, կառավարման ու քաղաքական մեկ կենտրոն չլինելու հանգամանքը հայությանը թույլ չտվեց կազմելու ազատագրման պայքարի ընդունելի ռազմավարությունը: Տարերայնորեն սկիզբ առած ազատագրական շարժումները ժամանակի ընթացքում բաժանվեցին երկու



մենք կարողանում էինք դարեր շարունակ ստեղծել եւ ապա կորցնել հայկական պետությունը: Թերեւս պետութենաստեղծման հարցում մենք համաշխարհային ռեկորդակիրներ ենք, քանի որ կարողացել ենք մինչ այժմ, գոնե հայտնի փաստերի հիման վրա, ստեղծել եւ ապա կորցնել 8 հայկական պետություն՝ Ուրարտուից մինչ այսօր: Չգիտեմ, այս հարցում մեզ հետ կարո՞ղ է համեմատվել այլ ազգ կամ ժողովուրդ, թե՞ ոչ, այնուամենայնիվ կարծում եմ, ավելի շուտ ոչ: Քանի որ պետություններ ստեղծելու մեր բացառիկ ունակությունը ու դրանք չպահպանելու տաղանդը ամեն ազգի տրված չէ:

Ինչեւէ, հայկական հերթական պետության կործանումը հերթական անգամ հանգեցրեց Հայկական հարցի ի հայտ գալուն, որի գերնպատակը, ինչպես միշտ, էլի դարձավ հայկական պետականության վերականգնումը որպես առաջնային խնդիր: Սակայն Փոքր Ասիայում թուրքական ցեղախմբերի հայտնվելը եւ այնտեղ գերիշխանության հաստատումը փոխեցին նաեւ հայկական օրակարգը. եթե մինչ այդ մեր գերխնդիրը հայկական պետականության ուղղակի վերականգնումն էր, ապա այժմ առաջնային դարձավ հայկական էթնոսի գոյության ապահովումը իր բնօրրանում:

Հայկական գոյության պահպանության հարցը նախկինում եւս առաջ էր եկել տարբեր արշավանքների ու պատերազմների ժամանակ, սակայն նախկին նվաճողները որպես կանոն հեռանում էին թողնելով միայն ավերակներ եւ տխուր հիշողություններ: Իսկ խաղաղության ժամանակահատվածը հնարավորություն էր տալիս հայությանը վերականգնվելու եւ վերագտնելու իր կորուստը:

Արդեն 11-րդ դարից Հայկական լեռնաշխարհում հայտնված օտար ցեղախմբերը, ի տարբերություն նախկինների, որոշել էին ավելի երկարատեւ ժամանակով մնալ, հետեւաբար խնդիրներն էլ, որոնք առաջացան հայության համար, այլ էին, քան կային նախկինում: Այսինքն, պետականության վերականգնման հարցը էլ ավելի բարդացավ, բացի այդ էլ, այդ հարցը հետ մղվեց օրակարգային իսկ շատ դեպքերում այն ընդհանրապես նրանց՝ թուրքերի մոտ չէր ստացվում:

Հայերը, ի տարբերություն մյուս ժողովուրդների, տարածաշրջանում ստեղծել էին հզոր քաղաքակրթական շերտ, որը ջնջել չհաջողվեց թուրքերին: Հայկական լեզուն, մշակույթը, կրոնը, ավանդույթները, ի տարբերություն մյուս ազգերի, արդեն կայացած էին: Հայերն ունեին Մաշտոց, Խորենացի, Նարեկացի, Շիրակացի եւ այլք: Կիլիկյան Հայաստանը էլ ավելի հզորացրեց, տարածեց ու խորացրեց հայկական մշակույթը, գիտությունն ու լեզուն՝ Թորոս Ռոսլինն ու Ֆրիկը այդ շրջանի լավագույն ներկայացուցիչներն էին: Հայ Առաքելական եկեղեցին իր ուրույն տեղն ու ձեռագիրն ուներ քրիստոնեական աշխարհում եւ այդ առանձնահատկությունն էլ ավելի էր ամրապնդում հայկական էթնոսի դիրքերն ու ազդեցությունը տարածաշրջանում եւ, այդպիսով, առանձնացնում տարածաշրջանի մյուս բնիկ ժողովուրդներից:

Նույնիսկ հայկական պետականության անկումից հետո հայկական քաղաքակրթությունը իներցիայով զարգանում էր ու տարածվում: Միջնադարում ստեղծվեցին հայ գրականության եւ մշակույթի լավագույն գործերը՝ Քուչակի, Գոշի, Մոմիկի եւ այլոց շնորհիվ: Քաղաքակրթական նման խորքային ինքնություն ունեցող ազգին ուծացնելը դժվարագույն խնդիր դարձավ գերիշխող թուրք էլիտայի համար թե՛ Օսմանյան կայսրության տարածում, թե՛ Հարավային հիմնական մասի՝ ֆիդայիների կամ ֆիդայական շարժման եւ ընդհանուր ապստամբության կողմնակիցների: Եթե առաջինի կազմակերպումը բավականին հեշտ էր ու ոչ այնքան ֆինանսատար՝ երբ մի քանի հոգի կարող էին 2 հրացանով բարձրանալ լեռներ ու իրենց հայրենաց զինվոր հայտարարել ու թուրք սատկացնել, առանց հետաքրքրվելու դրա հետեւանքների մասին, ապա համընդհանուր ապստամբության կազմակերպման կողմնակիցները թեեւ քիչ էին , սակայն հասկանում էին, որ դրա համար ժամանակ ու երկարատեւ աշխատանք է հարկավոր:

Համընդհանուր ապստամբության ջատագով ամենախոշոր կառույցի՝ Արմենականների ոչնչացումը, Վանի 1896թ. հայտնի ապստամբությունից ու դրա ղեկավարի՝ Մկրտիչ Ավետիսյանի նահատակվելուց հետո, փաստորեն, թուլացրեց ապստամբության կողմնակիցների շարքերը: Հետագայում սպանվեցին նաեւ ֆիդայական շարժմանը դեմ հանդես եկող եւ ընդհանուր ապստամբության կազմակերպման կողմնակից այնպիսի կարկառուն ներկայացուցիչներ՝ ինչպիսիք էին Հրայր Դժոխքը, Սեպուհը, Մեծն Մուրադը եւ այլք: 1915թ. Հայոց ցեղասպանությունը հետեւանք էր նաեւ ապստամբության երկարատեւ նախապատրաստման ու կազմակերպման կողմնակիցների պարտության: Հայության համար սկսվում էր Հայկական հարցի ձեւավորման նոր ժամանակաշրջան:

*(շարունակելի)*

AZG NEW SHABAT.QXD 06/09/2017 21:12 Page 7



ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ

Տեխնիկական գիտությունների թեկնածու

# Նոր հիդրոէլեկտրակայան Արցախում

Արցախի Հանրապետության տնտեսության զարգացման համար կարեւոր նշանակություն ունի գետերի էներգիայի օգտագործումը: Վերջերս շահագործման հանձնվեց Արցախում իր հզորությամբ երկրորդ «Ջերմաջուր» հիդրոէլեկտրակայանը: Այն կառուցվել է Թարթառ գետի վրա եւ ունի մոտ 12 մեգավատ հզորություն: Էլեկտրական էներգիայի տարեկան արտադրությունը կազմում է ավելի քան 80 միլիոն ԿՎտժ: Տեղադրվել է 4 հիդրոագրեգատ՝ բերված Եվրոպայից:Նրանց աշխատանքի արդյունավետությունը շատ բարձր է: Հիդրոէլեկտրակայանի նախագծման աշխատանքները կատարվել են «ԷՌԱ» ՍՊԸ-ի բարձր որակավորում ունեցող մասնագետների եւ գիտնականների կողմից (տնօրեն՝ Մանուկ Պապիկյան, գլխավոր ինժեներ՝ Ստեփան Պապիկյան):



ՀԷԿ-ի գլխային հանգույցը իրենից ներկայացնում է բետոնային ջրթափային պատվար ջրընդունիչով, տղմազտարանով եւ հատակային ջրթողով ու ձկնանցարանով:Ընդ որում, մեծ տեղ է հատկացված ձկնանցարանին,որը հնարավորություն է տալիս ձկներին ազատ տեղաշարժվելու գետում: Գետի ջրային միջավայրի կենսաբազմազանության պահպանության նպատակով ձկնանցարանը կօգտագործվի նաեւ բնապահպանական հոսքի թողքի համար:

ՀԷԿ-ը ինժեներական հզոր կառույց է, կառուցվել է շինարարական բարձր մակարդակով եւ ներկայումս շահագործվում է հայ մասնագետների կողմից:

Հարկ է նշել նաեւ, որ «ԷՌԱ» ՍՊԸ մասնագետների կողմից Արցախի տնտեսության զարգացման համար նախագծվել եւ կառուցվել են նաեւ «Հոչանց» ՀԷԿ-ը եւ բազմաթիվ այլ ՀԷԿ-եր: Ներկայումս նախագծային աշխատանքներն այս ուղղությամբ շարունակվում են:

Արցախում մինչեւ 1920-ական թվականները շահագործվող միակ ՀԷԿ-ը եղել է Շուշի քաղաքի մոտ:Նրա հզորությունը կազմել է 30ԿՎտ:

# Ադրբեջանը Բուլղարիայի համագործակցությամբ զենք է մատակարարում ահաբեկիչներին

*350 «դիվանագիտական թռիչքներ» դեպի Սիրիա, Իրաք, Աֆղանստան, Պակիստան եւ Կոնգո*

Բաքուն դարձել է զինամթերքի մատակարարման, գնման ու վերավաճառքի համաշխարհային կենտրոն: Թռիչքներից շատերը տեխնիկական ստուգման պատճառաբանությամբ մի քանի ժամով վայրէջք են կատարում Բաքվում կամ այլ օդակայաններում մինչեւ հասնեն իրենց վերջնակետը: Չնայած նման թռիչքներ կատարող ինքնաթիռներին հատուկ չեն վայրէջքները, սակայն ադրբեջանական «Silk Way» ընկերության ինքնաթիռները ճշտապես կատարել են նման թռիչքներ ու վայրէջքներ: Բուլղարացի լրագրողուհի **Դիլյանա Գայտանջիեւան** արեւելյան Հալեպում ստորգետնյա 9 պահեստներ է հայտնաբերել, որոնցում գտնվող ծանր զրահատեխնիկան պատկանել է Բուլղարիային:

Գայտանջիեւայի պնդմամբ վերջին երեք տարում առնվազն 350 դիվանագիտական թռիչքներ են կատարել ադրբեջանական պետական Silk Way Airlines ընկերության ինքնաթիռները, որոնք տասնյակ տոննաների հասնող ծանր զրահատեխնիկա եւ զինամթերք են մատակարարել ահաբեկիչներին:

Տեղեկատվական արտահոսքի մեջ եղել են թղթակցություններ Բուլղարիայի արտգործնախարարության եւ Բուլղարիայում Ադրբեջանի դեսպանատան միջեւ, որոնցում դիվանագիտական անձեռնմխելիություն է տրվել դեպի Բուլղարիա, այլ եվրոպական երկրներ, ԱՄՆ, Սաուդյան Արաբիա, Թուրքիա, Միացյալ Արաբական Էմիրություններ եւ հետադարձ ուղղությունների համար: Ըստ փաստաթղթերի, ադրբեջանական ավիաընկերությունը նման դիվանագիտական թռիչքներ տրամադրել է Բալկանների, Մ. Նահանգների, Իսրայելի, Աֆղանստանում գտնվող գերմանական եւ դանիական զինուժին, Իրաքում գտնվող շվեդական զինուժին եւ այլ երկրների մասնավոր ընկերություններին եւ զինամթերք արտադրողներին: Այդ թռիչքները եղել են բոլոր տեսակի ստուգումներից ու հարկերից զերծ:

Միջազգային ավիափոխադրման Ասոցիացիայի (IATA) օրենքով վտանգավոր ապրանքների փոխադրումն առանց համապատասխան թույլտվության չի իրականացվում: Փաստաթղթերի հավաստմամբ Ադրբեջանի արտգործնախարարությունը հրահանգել է Բուլղարիայի եւ այլ եվրոպական երկրների իր դեսպանատներին ապահովել դիվանագիտական անձեռնմխելիություն Silk Way Airlines թռիչքների համար: Դեսպանատները դիմել են համապատասխան երկրների արտգործնախարարություններին՝ պահանջելով նման թույլտվություն: Ադրբեջանի արտգործնախարարությունն իր պատասխան նամակում, ստորագրված տեղական ավիաընկերության կողմից, տվել է նման իրավունք՝ փոխադրելու վտանգավոր ապրանքներ: Ըստ երեւույթին Բուլղարիայի, Սերբիայի, Ռումինիայի, Չեխիայի, Հունգարիայի, Սլովակիայի, Լեհաստանի, Թուրքիայի, Գերմանիայի, Բրիտանիայի, Հունաստանի եւ այլ երկրների պատասխանատու իշխանությունները աչք են փակել քաղաքացիական ավիացիայով տոննաներով զենք ու զինամթերք փոխադրելու փաստին, որը նույնպես արգելված է IATA-ի կանոնադրությամբ: Silk Way Airlines-ը այդ պատճառով դիմել եւ ստացել է թույլտվությունը իր տեղական գործակալությունների միջոցով:

«Դիվանագիտական թռիչքներ զենքի փոխադրման համար» ծառայություններից հիմնականում օգտվում են Մ. Նահանգների ընկերությունները, որոնք ամերիկյան բանակին եւ հատուկ գործողությունների հրամանատարությանն են ուղարկում բազմամիլիարդ դոլարի արժողությամբ տարբեր տեսակի զենքեր ու զինամթերք: Էականն այստեղ այն է, որ այդ զենքերը չեն համապատասխանում ամերիկյան ստանդարտներին եւ չեն օգտագործվում ԱՄՆ-ի զինուժի կողմից:




Ըստ փաստաթղթերի, երբեմն Ադրբեջանի օդուժն էլ է մասնակցել զենքերի բեռնափոխադրություններին: 2015-ի մայիսի 12-ին, օրինակ, նման մի ինքնաթիռ 7,9 տոննա PG-7V եւ 10 տոննա PG-9V տեսակի զենքեր է տեղափոխել Բուրգաս (Բուլղարիա)-Ինջիրլիք (Թուրքիա)-Բուրգաս-Նասոսնի (Ադրբեջան) ճանապարհով: Առաջինը եղել է Purple Shovel ամերիկյան ընկերությունը, իսկ ստացողը՝ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը: Սակայն փաստաթղթերի վկայությամբ բեռնաթափումը տեղի է ունեցել Ինջիրլիքում եւ երբեք էլ չի հասել Ադրբեջան: Զենքերը Purple Shovel-ին է վաճառել բուլղարական «Ալկունս» ընկերությունը: Արտադրված են եղել բուլղարական VMZ զինվորական գործարանի կողմից: Օգտագործվել են, ըստ ձեռք բերված փաստաթղթերի, Ալ-Նուսրա ահաբեկչական ճակատի զինվորների կողմից:

Մեկ ուրիշ օրինակ: «Orbital ATK» ընկերությունը Silk Way Airlines-ով դիվանագիտական 6 թռիչքներ է իրականացրել 2015-ի հուլիս-օգոստոս ամիսներին Բաքու-Տուզլա (Բոսնիա-Հերցեգովինա)-Բաքու-Քաբուլ (Աֆղանստան) երթուղիով: Զենքերի արտահանողը IGMAN J.J Konic-ն է եղել Բոսնիա-Հերցեգովինայից՝ Orbital ATK-ի պատվերով: Ստացող երկիրը եղել է Աֆղանստանը, բայց հետաքրքրականն այն է, որ բոլոր թռիչքները մոտ 7 ժամ 30 րոպե վայրէջք են կատարել Բաքվում՝ նախքան Աֆղանստան հասնելը:

Ռազմաարդյունաբերական Chemring գործարանը նույնպես արտադրում է ամերիկյան ստանդարտներին չհամապատասխանող զենքեր, որոնք ըստ 4 պայմանագրերի, 302,8 միլիոն դոլարի չափով Silk Way Airlines-ի թռիչքներով հասել են Սերբիա, Բուլղարիա եւ Ռումինիա, եւ ապա Իրաք ու Աֆղանստան:

2016 թվի հոկտեմբերի 18-ին Chemring-ի գնած 15,5 տոննա կշռող 122 մմ հրթիռները տեղափոխող ինքնաթիռը շեղելով ճանապարհը դեպի Քաբուլ, վայրէջք է կատարել Լահորում (Պակիստան), որտեղ 2 ժամ մնալուց հետո շարունակել է թռիչքը դեպի Աֆղանստան: Միակ բացատրությունը այստեղ բեռնաթափումն է Պակիստանում, չնայած փաստաթղթերը նշել են Աֆղանստանը որպես ստացող երկիր:

Ամերիկյան բանակին ոչ-ստանդարտային զենքեր մատակարարող ամենամեծ ընկերությունը «Alliant Tech-Systems Operations- USA-ն» է, որն ունի 490,4 միլիոն դոլարի պայմանագրեր: Այս ընկերությունը 2016-ի դեկտեմբերին տոննաներով API 23x115 mm, HE 23x115 mm, եւ GSH 23x115 mm տիպի նռնակներ է փոխադրել Յուգոիմպորտից (Սերբիա) դեպի Աֆղանստան:

Silk Way Airlines-ի ծառայություններից օգտվել է նաեւ Սաուդյան Արաբիան, որ անշուշտ չի օգտագործում այդ ոչ-ստանդարտային զենքերը, այլ դրանք հայտնվում են ահաբեկիչների ձեռքերում: Այս տարվա ապրիլի 28-ին եւ մայիսի 12-ին երկու թռիչքներ Բաքու-Բուրգաս-Ջեդդա-Բրազավիլ երթուղով հասել են Կոնգո: Փետրվար եւ մարտ ամիսներին Սաուդյան Արաբիան ստացել է 350 տոննա կշռող զենք ու զինամթերք Silk Way-ի միջոցով: Բեռների մեջ եղել են գրադ տիպի (122 mm) հրթիռներ:

Օրինակները շատ են եւ բազմապիսի: Փաստաթղթերն ապացուցում են, որ Silk Way-ի ինքնաթիռները տեղափոխել են նաեւ սպիտակ ֆոսֆոր, որը մահացու է: Միայն 2015-ի մարտի 22-ին 100 տոննա սպիտակ ֆոսֆոր է արտահանվել Բելգրադից (Յուգոիմպորտ) Քաբուլ:

Զինամթերք տեղափոխող թռիչքներից մեկը Դիարբեքիրում (Թուրքիա) վայրէջք կատարելուց հետո, ուղեւորվել է Սաուդյան Արաբիա եւ ապա Բուրկինա-Ֆասո: Մի շաբաթ անց այդ երկրում զինվորական հեղաշրջում է կատարվել:

Դեպի Էրբիլ բեռնափոխադրումների արտահանողը եղել է «ELDON S.R.O» ընկերությունը Սլովակիայում, իսկ ներածողը՝ «Wide City LTD» ընկերությունը Էրբիլում: Այդ ընկերությունը գրասենյակներ ունի Լիմասոլում, Սոֆիայում եւ Էրբիլում: Էրբիլում գրասենյակ ունի նաեւ բուլղարական «Techno-Defense LTD» ընկերությունը, որի սեփականատերն է արքայազն Էլ-Ահմեդ Սալեհը: Ընկերությունը Zagros տիպի զենքեր է արտադրում Ադրբեջանում, որոնք հետագայում հայտնվում են քրդական PKK կուսակցության անդամների ձեռքերում:

Ավելացնենք, որ Դիլյանա Գայտանջիեւան իր այս հայտնագործությունների համար հեռացվել է աշխատանքից: Լրագրողը կատարվածի առնչությամբ օգոստոսի 24-ին իր ֆեյսբուքյան էջում գրառում է կատարել: «Այսօր՝ Սիրիայի ահաբեկիչներին մատակարարվող զենքի վերաբերյալ իմ հետաքննած գաղտնի փաստաթղթերի առնչությամբ Բուլղարիայի ազգային անվտանգության գործակալությունում հարցաքննությունից հետո, «Trud Daily» օրաթերթը՝ Սիրիա մեկնելուց եւ իմ աշխատանքը շարունակելուց ընդամենը մի քանի օր առաջ ինձ հեռացրեց աշխատանքից»: Լրագրողը միաժամանակ կասկած է հայտնում, որ իր հետաքննական նյութը կարող է հեռացվել «Trud Daily» օրաթերթի կայքից:

Պետք է արժանին մատուցել ՌԱԿ-ի նորաստեղծ «Հայ Ձայն» լրատվական կայքին, որն առիթը օգտագործելով բացառիկ հարցազրույց է ունեցել բուլղարացի լրագրողուհու հետ, որին կարելի է ծանոթանալ այցելելով haydzayn.am (նաեւ haytsayn.am) կայքի 29.08.17 թվականի թողարկման մեջ:

Պատրաստեց Հ.Ծ.

AZG NEW SHABAT.QXD 06/09/2017 21:12 Page 8



# Թուրքիան դիմակայում է ճգնաժամի շուրջ ստեղծված քաոսը

ՋԵՅԿՈԲ ՇԱՊԻՐՈ

*Անցյալ տարվա ճգնաժամից հետո, երբ զինվորականների մի խումբ փորձեց տապալել կառավարությունը, նախագահ Էրդողանը օգտագործեց առիթը ազատվելու իր իշխանությանը սպառնացող հնարավոր հակառակորդներից: Այդ գործընթացը դեռ չի ավարտվել, եւ Թուրքիան դեռեւս գտնվում է արտակարգ իրավիճակի պայմաններում: Քաոսն այժմ նրա շուրջն է, եւ Թուրքիան փորձում է դիմակայել այն:*

## Անկարայի տեսանկյունից

Փորձենք դիտել աշխարհը Անկարայի տեսանկյունից: Հարավում «Իսլամական պետությունն» է, որ դանդաղորեն խորտակվում է: Իրաքը հազիվ է կարողանում քարշ տալ իր գոյությունը: Սիրիան պատերազմի մեջ է՝ մի կողմից Ամերիկայի հովանավորությամբ Սիրիական Ժողովրդական Ուժերի (ՍԺՈՒ), եւ մյուս կողմից Ռուսաստանի հովանավորությամբ Ասադի վարչակարգի պաշտպան ուժերի միջեւ: Թուրքիան ցանկանում է ԻՊ-ն խորտակված տեսնել, բայց հետաքրքրված չէ, թե ո՞ւմ կհաջողվի դա իրականացնել: ՍԺՈՒ-ն կազմված է հիմնականում սիրիական քուրդերից, որոնք ըստ Թուրքիայի, նույնքան ահաբեկչական են, որքան ԻՊ-ն ինքը: Թուրքիան Ասադի իշխանությանը դեմ էր նույնիսկ նախքան Սիրիայի պատերազմը: Հարավարեւելքում Քուրդիստանի շրջանային կառավարությունը (ՔՇԿ) կարծես թե վճռական է անկախության հանրաքվե անցկացնելու սեպտեմբերի 25-ին: Թուրքիան պահանջել է ՔՇԿ-ից հանրաքվե չանցկացնել, որովհետեւ վախենում է հետեւանքներից: Ավելի հարավում Իրանն ու Սաուդյան Արաբիան մեկ սիրաբանում են, մեկ էլ սպառնում միմյանց: Թուրքիան փորձում է սահմանափակ հարաբերություններ պահպանել Իրանի հետ որոշ ոլորտներում: Իսկ հյուսիսում Թուրքիայի հարաբերությունները Ռուսաստանի հետ մնում են բարդ ու խճճված՝ կապված ռուս-ամերիկյան հարաբերությունների հետ: Վերջիններս համագործակցում են Սիրիայում ԻՊ-ի դեմ մղված պատերազմում, բայց մյուս ամեն ինչում իրար դեմ են: Ուկրաինայի հարցում ամերիկացիները նեղում են Ռուսաստանին, որն էլ իր հերթին հակադարձելու համար օգտագործում է Բալկաններն ու Կովկասը: Թուրքիան փորձում է ընդլայնել իր ազդեցությունները առաջինում (Բալկաններում) եւ շարունակել դերակատարություն ունենալ երկրորդում (Կովկասում): Ռուսաստանի գործողությունները այդ երկու վայրերում կարող են ազդել Թուրքիային եւ նա պարտավոր է պատրաստ լինել դրանց:

Թուրքիան իրեն հատուկ արտաքին քաղաքականությամբ փորձում է հավասարակշռված հարաբերություններ պահպանել բոլոր կողմերի հետ: Այդ մասին են վկայում վերջին շրջանում բարձրաստիճան օտար դիվանագետների այցելություններն այդ երկիր: Նախ Իրանի զինված ուժերի աշխատակազմի ընդհանուր հրամանատարի, հետո Ռուսաստանի նրա գործընկերոջ, իսկ օգոստոսի 23-ին էլ Մ. Նահանգների պաշտպանության նախարար Ջեյմս Մաթիսի այցելությունները հետեւեցին միմյանց:

Թուրքիան խոստացավ ավելացնել զինվորական համագործակցությունը Իրանի հետ, մի բան, որ զարմանալի էր, քանի որ երկուսն էլ փորձում են տիրանալ շրջանային առաջնորդության: Նրանց շահերը, ինչ խոսք, հակասական են: Ռուսաստանի հետ Թուրքիան համաձայնվեց համադրել տակտիկական գործողությունները Սիրիայում, եւ ողջունեց Ռուսաստանի պատրաստակամությունը հասկանալու իր մտահոգությունները կապված քուրդերի հետ:

Ամերիկայի հետ հարաբերությունները վերջին շրջանում հետզհետե վատանում են, եւ քուրդերին օժանդակելու Ամերիկայի որոշումը կարծես մի նոր հարված էր ուղղված Թուրքիայի դեմ: Այդ առումով Մաթիսի այցը կարծես տարաձայնությունները որոշ չափով հարթեցնելուն է ծառայում:

Պենտագոնի հրապարակած պաշտոնական հայտարարությունները տիպիկ քաղաքական հայտարարություններ են՝ քաղցրահունչ, բայց անբովանդակ: Բայց որոշ թուրք պաշտոնյաներ, որոնք ցանկացել են անհայտ մնալ, լրագրողներին տեղեկացրել են, որ Մաթիսը պարտավորվել է օգնել Թուրքիային պայքարելու քրդական PKK-ի դեմ, եւ վստահեցրել է, որ սիրիական քրդերի իրենց օգնությունը միայն ժամանակավոր բնույթ է կրում՝ մինչեւ ԻՊ-ի ջախջախումը: Մաթիսը դեմ է արտահայտվել անկախության հանրաքվեի անցկացմանը: Այնպես որ, ընդհանուր առմամբ Մաթիսի այցը իր ցանկալի արդյունքը տվել է:



## Գերիշխանությունների միջեւ

Դժվարությունն այժմ քաղաքական հավասարակշռություն պահպանելն է Ռուսաստանի եւ Մ. Նահանգների միջեւ: Առաջիկա տարիներին Թուրքիան անհրաժեշտաբար ներթափանցելու է այնպիսի ոլորտներ, որոնք Ռուսաստանի ազդեցության տակ են, իսկ ինքը դեռեւս պատրաստ չէ նման հակամարտության: Չմոռանանք, որ Ռուսաստանը կարեւոր ներկայություն ունի ինչպես Կովկասում, այնպես էլ Մերձավոր Արեւելքում: Թուրքիայի նկրտումները ավելի մոտիկ են տարածաշրջանների հանդեպ ամերիկյան մոտեցումներին, սակայն այդ կապը կատարյալ համարել ճիշտ չի լինի: Մ. Նահանգները Թուրքիային տեսնում է որպես «կրտսեր դաշնակցի», մինչ ինքը՝ Թուրքիան իրեն համարում է աճող մի պետություն, որը պարտավոր չէ որեւէ մեկի խնդրանքները կատարել: Թուրքիան այնքան հզոր չէ, որ դիմադրի երկու գերտերություններին, իսկ նրանցից մեկն ու մեկի կողմը բռնելը չի օգնի առաջ տանելու իր շահերը: Այստեղից էլ հարաբերությունների խճճվածությունը:

Այդ խճճվածությունը շեշտելու ծառայեց նաեւ Մաթիսի այցը Կիեւ, անմիջապես Թուրքիայից հետո: Մինչ ուկրաինական եւ ռուսական լրատվամիջոցները մեջբերեցին Մաթիսի խոսքերն այն մասին, որ «Մ. Նահանգները հավանություն է տվել 175 միլիոն դոլարի արժողության հատուկ սարքավորումներ տրամադրել Ուկրաինային՝ ուժեղացնելու համար նրա պաշտպանունակությունը», ամերիկյան լրատվամիջոցները լուռ մնացին այդ մասին: Մի բան պարզ է: Պաշտպանության նախարարը դատապարտել է ռուսական ագրեսիան եւ խոստացել չհանդուրժել որեւէ ոտնձգություն Ուկրաինայի ինքնիշխանության դեմ:

Մ. Նահանգները դեռ քննարկում է Ուկրաինային պաշտպանական զենքեր (հակատանկային հրթիռներ) տրամադրելու հարցը, ինչը դրական լուծվելու դեպքում Ռուսաստանի համար կնշանակի անցնել «կարմիր գիծը»:

Ակնարկներ հնչում են, որ Ամերիկան պատրաստ է երկխոսության եւ Ուկրաինայի գծով ԱՄՆ-ի հատուկ բանագնացի հանդիպումը Պուտինի հատուկ բանագնացի հետ անշուշտ կարող է թուլացնել լարվածությունը: Բայց Մաթիսի կոշտ տոնն ու հակառուսական սանկցիաները միայն անվստահություն եւ թշնամանք են առաջացնում առայժմ: Ռուսաստանը կարող է որոշ ժամանակ համբերատար լինել: Բայց նա բավականաչափ ուժեղ է հակազդելու համար Մ. Նահանգներին:

## Թուրքիայի տեսլականը

Այս բոլոր հարցերը մեծ նշանակություն ունեն Թուրքիայի համար: Թուրքերը փորձում են համապատասխան ծրագիր մշակել պաշտպանելու համար իրենց շահերը, որքան որ հնարավոր է: Հակառակ Սիրիա ներխուժելու սպառնալիքներին, նա առայժմ զերծ է մնացել նման քայլ անելուց: Թուրքիայի արտգործնախարարը նույնիսկ բացառեց սահմանի փակումը ՔՇԿ-ի հետ, եթե վերջինս անցկացնի հանրաքվեն: Թուրքիայի գլխավոր նպատակն է դիվյայնացնել սիրիական քուրդերին, որոնք ավելի շատ նմանություններ ունեն Թուրքիայի, քան Իրաքի քուրդերի հետ:

Պետական հեղաշրջման փորձը կարճ ժամանակով թուլացրեց Թուրքիային, հատկապես ուժեղ պետություն դառնալու նրա հավակնությունը: Բայց դա, միաժամանակ, հնարավորություն տվեց Էրդողանին «մաքրել տեսադաշտը» եւ ձգտել ավելի բարձր հորիզոններ նվաճել: Մեկ տարի անց նա հյուրընկալում է, ինչպես վերեւում նշեցինք, Մ. Նահանգների, Ռուսաստանի եւ Իրանի պաշտպանության առաջնորդներին ընդամենը մեկուկես շաբաթվա ընթացքում: Ավելին, այդ գերատեսչությունների առաջնորդները իրենք են գալիս Թուրքիա, եւ Թուրքիան ինքն է որոշում իր օգնության գինը առանց որեւէ պարտավորություն ստանձնելու որեւէ կողմի նկատմամբ:

Թուրքիան ցանկանում է իրադարձությունների կիզակետում մնալ ինչքան հնարավոր է երկար ժամանակ: Բայց, ի վերջո, նա ի զորու չէ վերահսկելու ամեն ինչ, որ կատարվում է իր շուրջը: Այն ինչ կարող է անել իր պաշտպանունակությունը պահպանելն է եւ այնպես ձեւավորել իր տարածաշրջանային մթնոլորտը, որ փոթորկի մեջ մտնելու անհրաժեշտության դեպքում կարողանա պաշտպանել իր շահերը:

Կարեւորը Թուրքիայի համար ոչ թե սոսկ նման տեսլական ունենալն է, այլ իր շարունակական պատեհապաշտական հարաբերություններով կարողանալ իրականություն դարձնել այդ տեսլականը:

*Թարգմ. Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆԸ*
**(Reality Check)**

---

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

# Ռեալիկի կարգով

### Սահմանամերձ գյուղերից ինչպես արտագաղթում էին, այնպես էլ շարունակում են արտագաղթել

Նորերս իմ հայրենի Տավուշի մարզի՝ Ադրբեջանի հետ սահմանամերձ Մովսես գյուղում տեղի ունեցավ մի իրադարձություն, որն իր մեջ երկակի իմաստ էր բովանդակում: Ժամանակին արտագաղթած նախկին մովսեսցիները կազմակերպել էին «Գյուղի օր», իրենց ծննդավայրը մի քանի օր դարձնելով տոնախմբությունների հանդիսավայր: Ի դեպ, ցուցադրական ոչինչ չկար նախաձեռնության, մտահղացման մեջ. Ռուսաստանաբնակ մովսեսցիների օգնությունը հայրենի գյուղին հասել է 100 միլիոն դրամի սահմանագիծը: Բայց ահա անցան հուզական օրերը ու հյուրերը մեկնեցին իրենց նոր բնակատեղին եւ Մոսեսգեղը կրկին խրվեց սահմանամերձ գյուղի իր անհանգիստ ու անապահով կյանքի ու հոգսերի մեջ:

Խորհրդային տարիներին Մովսեսը Շամշադինի շրջանի ամենաբարեկեցիկ գյուղերից մեկն էր, մովսեսցիներն էլ ճանաչված էին որպես աշխատասեր ու համառ ժողովուրդ: Ի դեպ, բնավորության այս երկու գծերը նրանց շատ օգնեցին Ռուսաստանում, ուր արտագաղթելով, համեմատաբար կարճ ժամանակամիջոցում կարողացան հաստատել իրենց ու բարեկեցիկ կյանք ապահովել: Բերենք ընդամենը մեկ փաստ այն մասին, թե ինչի է վերածվել Մովսեսը անկախության տարիներին. գյուղի դպրոցն ուներ 1200 աշակերտ, մտածում էին նորը բացելու մասին: Այսօր աշակերտների թիվը հարյուրից փոքր-ինչ ավելի է՝ 115: Համեմատենք՝ 1200 եւ 115: Սա ինչ-որ բան նշանակո՞ւմ է: Եվ արտագաղթը շարունակվում է:

Մի քանի տարի առաջ «Ազգը» դիմել էր նախագահ Սերժ Սարգսյանին կոնկրետ մի հարցով՝ ինչո՞ւ չի կարելի սահմանամերձ գյուղերի բնակիչներին ազատել բոլոր պետական հարկերից: Թեկուզեւ Իսրայելի օրինակով: Պատրանքներ չեն կարող լինել. գնդակոծությունների ներքո ապրող գյուղացիները կարիք ունեն ոչ թե մասնակի, այլ կենսական մեծ արտոնությունների: Հակառակ պարագայում կշարունակվի 10 միլիոնը «բոլորած» Ազերստանին սահմանակցող գյուղերի, ինչպես նրանց բնակիչներն են ասում, «թոշակառուացումը»: Ջահելները ինչպես արտագաղթում էին, այնպես էլ շարունակում են լքել հայրենիքը: Սա անողոք փաստ է: Թերթը նախագահի կողմից ոչ մի պարզաբանում չստացավ: Գուցե շա՞տ են նախագահին ուղղված հարցադրումները: Համենայն դեպս Մովսեսում հատկապես ամռան ամիսներին ավելի ու ավելի շատ են հայտնվում... ռուսախոս երեխաներ՝ արտառոց երեւույթ տեղացիների համար: Հնարավոր է, որ այս պստիկները դեռ հետո հիշեն իրենց պապական գյուղը, բայց նրանց հաջորդ սերունդը...

Հայաստանի ղեկավարությունը մինչեւ ե՞րբ չպիտի ընդունի, որ ինքնասպանություն գործող երկրի ամենագլխավոր, բախտորոշ, հիմնական, անհետաձգելի խնդիրը արտագաղթի կանխումն է, որ սա պիտի լինի նրա գործունեության մեխը: Շահել ենք Արցախը, բայց կորցնում ենք Հայաստանը: Ադրբեջանի հետ սահմանակից գյուղերը դարձել են Հայաստանի ներկա ողբալի իրավիճակի խորհրդանշանները, արտագաղթը՝ հայոց տիրակալների գործունեության մեծագույն բացը:

# Մտորումներ Հայաստան-Սփյուռք համաժողովի նախօրեին

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ
դգդ

Ակընդետ հետեւում եմ տպագիր եւ էլեկտրոնային մամուլի ու այլ տեսակի ԶԼՄ-ներում հայ ժողովրդի երկու հատվածների ապագային եւ անելիքներին վերաբերող հրապարակումներին: Դրանք ավելի հաճախակի են դարձել հատկապես Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովի նախօրյակին: Կրկին արդիական ու հրատապ են հարցեր, որոնք մշտապես կախված են եղել օդում եւ պատասխանի են սպասել: Հարցեր, որոնք թեեւ տարբերվում են իրենց առաջնահերթությամբ ու ծավալներով, սակայն նույնքան կարեւոր են ու լուծման կարոտ:

Դրանց պատասխանները ու լուծումները գտնելու համար նախ եւ առաջ հարկավոր է հստակ ու ամբողջ ծավալով պատասխանել հարցերի մայր հարցին` որն է մեր համազգային նպատակը կամ որն է այն տեսլականը, որի լուծմանը պիտի ուղղված լինի մեր համազգային ներուժը: Իհարկե, ես հասկանում եմ, որ մի քանի բառով այնքան էլ հեշտ չի ձեւակերպել այդ «որ»-ի պատասխանը, սակայն տարբեր մասնագիտությունների ու խավերի խելացի ու շահագրգիռ ներկայացուցիչների համատեղ ջանքերով կարելի է փորձել: Հստակ է, որ դա մեկ օրվա ու մի գրչի հարվածով լուծելիք խնդիր չէ: Անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր բաղադրիչները, որպեսզի սխալներն ու վրիպումները բացառվեն:

Կարծում եմ հարկ չկա շեշտելու, որ մենք ցարդ չունենք հստակ քաղաքական մի ուղեգիծ, որը համապատասխանի ազգիս հավաքական կամքին եւ շահերին: Կարիք չկա նաեւ ասելու, որ նազարահրաշքի արդյունքում իշխանության ղեկին հայտնված որոշ անհատներ ու խմբեր իրենց իրավունք վերապահեցին ուղղորդելու ազգին: Փույթ չէր, որ դրա արդյունքում այսօր ունենք սակավահայ ու դատարկվող, անընդհատ ծերացող, արտաքին ու ներքին պարտքերի մեջ թաղված ժողովուրդ եւ ամեն օր տռզող ու հղփացող «էլիտա»: Այսինքն` ոչ մի անհատ կամ մարդկանց խումբ (դա լինի կուսակցություն կամ մեկ այլ բան) իրեն իրավունք չպիտի վերապահի ամբողջ ազգի անունից խոսելու եւ գործելու թե՛ Հայրենիքում, թե՛ Սփյուռքում: Դա պետք է արվի միմիայն համազգային կառույցի, իրապես ամբողջ ազգի շահերն ու նպատակներն արտահայտող ու արդարացնող կառույցի կողմից: Պատկերավոր ասած` ազգն իր հավերժի նավը վարելու համար բոլոր խավերի ու հատվածների համագործակցության կարիքն ունի, բոլոր հոսանքների կամքը ներկայացնող մարմին ստեղծելու անհրաժեշտությունը: Իսկ անունը Համահայկական խորհուրդ կլինի, թե մեկ այլ բան, այնքան էլ կարեւոր չէ:

Ամենակարեւորն այն գիտակցումն է, որ այդ կազմակերպության նպատակների ու գործունեության առանցքն արբանյակ գաղթօջախների անխաթար միասնության հենքով Հայաստանը պետք է լինի: Բայց քանի որ առայժմ ներկա Հայաստանի հնարավորությունները բավականին համեստ են միայնակ ամբողջ հայության ճակատագիրը տնօրինելու համար, ուստի անհրաժեշտ է բոլոր հատվածների անկաշառ մասնակցությունն ու համախմբումը ստեղծվելիք կառույցի շուրջը: Անչափ կարեւոր է, որ այդ կառույցի գործունեությունն ու պահվածքը համահունչ լինի Հայաստանի Հանրապետության շահերին ու ներքին եւ արտաքին քաղաքականությանը: Մեր պատկերացմամբ այդ կառույցը պետք է դառնա այն կապող օղակը, որի թելերը պիտի ձգվեն, հասանելի դառնան մեր մոլորակի ամենահեռավոր ծայրերն ու միմյանց կապեն աշխարհասփյուռ հայությանը, որը կնմանվի բազմագործիք, բայց համահունչ նվագախմբի: Հակառակ դեպքում ամեն մի գաղթօջախում իր թմբուկը կզարկի որեւէ կարող անհատ կամ կազմակերպություն, իսկ այդ դեպքում խմբակային համահունչ երաժշտության փոխարեն կստացվի անհասկանալի ռիթմերով դղրդացող թմբուկների աղմուկ:

Վերջին ժամանակներում հայրենիքում եւ սփյուռքում եղած հրապարակումներում էլ կարմիր թելի նման անցնում է այն միտքը, որ նման կառույցի ստեղծումն անհրաժեշտ է, տեղին ու ժամանակին: Այսպես, օրերս «**Ազգ**» թերթին տված հարցազրույցում ակադեմիկոս **Աշոտ Մելքոնյանը** ոչ միայն չի վիճարկում դրա ստեղծման անհրաժեշտությունը, այլեւ մտահոգ է միայն, որ այն լինի դինամիկ, կայուն, հեղինակավոր եւ մշտապես գործող կառույց («**Ազգ**», 1 սեպտեմբերի, 2017):

Բեյրութի «Ազդակ» թերթի խմբագիր **Շահան Կանտահարյանի** կարծիքով էլ, քանի որ հոբելյանական տարվա` Հայաստանի Հանրապետության հիմնադրման 100-ամյակի նախաշեմին ենք` բոլոր քննարկումների առանցքը հանդիսանալու է պետականությունն իբրեւ մեր համազ-




գային գոյության կարեւորագույն երաշխիք եւ ակնկալում, որ կյանքի կկոչվի Համահայկական խորհուրդը, որի առաջին նախադեպային փորձը փայլուն ձեւով աշխատեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգելու առումով: Ապա ավելացնում, որ Համահայկական խորհուրդը անհրաժեշտություն է եւ անհետաձգելի հրամայական` իբրեւ թե՛ հայրենական, բնականաբար, նաեւ` արցախյան, թե՛ սփյուռքյան ռազմավարական նշանակություն եւ համահայկական տարողունակություն ունեցող հիմնախնդիրները համակարգելու եւ միասին աշխատելու առումով (տե՛ս http://www.nt.am/am/news/ARIQ.twitter): Ավելին, նա ենթադրում է նաեւ, որ Խորհուրդը կունենա տարածաշրջանային խորհուրդներ կամ հանձնաժողովներ, որոնք կհամագործակցեն եւ կհամադրեն իրենց ծրագրերը Համահայկական կենտրոնական խորհրդի հետ:

Մոտալուտ համաժողովի նախօրեին Ուոթերթաունում լույս տեսնող ՌԱԿ պաշտոնաթերթ «Պայքար»-ն էլ իր հետաքրքրական եւ բովանդակալից խմբագրականում բոլորովին չվիճարկելով նման կառույցի ստեղծման անհրաժեշտությունը` միայն մտավախություն է հայտնում, որ այն հանկարծ չդառնա ՀՀ իշխանությունների արհեստական կցորդն ու հերթական ձեւական ու անկենսունակ կազմակերպությունը («Պայքար», 27 օգոստոսի, 2017):

Գրեթե նույն բովանդակությամբ ու նույն սպասելիքներով այդպիսի մոտեցում են հանդես բերել հայրենի ու սփյուռքահայ բոլոր այն ԶԼՄ-ները, որոնք անդրադարձել են խնդրին: Այնպես որ, կառույցի ստեղծման գաղափարը կարծես թե ոչ ոք չի վիճարկում: Սակայն դրա ստեղծման ձեւերի, գործելու սկզբունքների, իրավունքների, պարտականությունների եւ այլ զանազան հարցեր պարզաբանման կարիք ունեն: Ավելին, հայ հասարակությունը բացարձակապես անտեղյակ է դրանց մասին: Իսկ որպեսզի տարակարծություններն ու արհեստական խոչընդոտները բացառվեն, հարկավոր էր ստեղծվելիք այդ կազմակերպության ծրագրային հիմնադրույթներն ու կանոնադրական նորմերը թե՛ Հայաստանում եւ թե՛ Սփյուռքում նախապես դրվեին լայն համաժողովրդական քննարկման: Այնուհետեւ այդ քննարկումների արդյունքները հաշվի առնելով մշակվեին համապատասխան նորմերը եւ նոր դրանք ներկայացվեին հաստատման: Հակառակ դեպքում, տխուր պատկեր կունենանք նաեւ այս հարցում, քանի որ կրկին օրակարգի խնդիր կդառնա տարածված այն կարծիքը, թե սփյուռքի համակարգումը մեր իշխանությունները պատկերացնում են անվերապահ իրենց ենթարկվելու ձեւով, ինչը շատ դեպքերում խրտնեցնում, իրենից հեռացնում է առողջ ուժերին եւ առիթ դառնում զանազան ոչ ցանկալի խոսակցությունների:

❖❖❖

Ի դեպ, համաժողովի ներկայացված հարցերի վերաբերյալ ունենք մեր վերապահումները: Օրակարգի հարցերի ներկայացված հերթականությունն (1. Հայաստանի զարգացման հիմնախնդիրները, 2. Հայաստանի պաշտպանական քաղաքականության առանձնահատկությունները, 3. Արտաքին քաղաքականության օրակարգ, 4. Հայապահպանության խնդիրները) իրենց կարեւորությունից ելնելով միանշանակ պետք է փոխվեն: Գաղտնիք չէ, որ այսօր մեր թիվ մեկ խնդիրը հետեւապես էլ թիվ 1 հարցը հայապահպանությունը պետք է լինի թե՛ ՀՀ-ում, թե՛ ամենուր, որովհետեւ առանց հայության մնացյալ հարցերը պարզապես անիմաստ են դառնում: Անմիջականորեն դրան ածանցյալ պետք է քննարկվի եւ հստակ ուղիներ նշվի արտագաղթը կանխելու եւ ամբողջովին դադարեցնելու ուղղությամբ: Այդ քննարկումներում պիտի ելակետ դառնա այն համոզումը, որ մարդիկ ավելի շատ գաղթում են անելանելի վիճակում հայտնվելու, համատարած անարդարություններին բախվելու եւ ոչ թե մի փոր հացի համար: Ուշադրության պիտի առնվի այն կարեւոր հանգամանքը, որ հայաստանաբնակ հայերի ճնշող մեծամասնությունը փոխատվական, վաշխառուական կապիտալի ճիրաններում տառապում է, իսկ այդ եկամուտները հոսում են մի քանի նախկին ու ներկա իշխանավորների կամ նրանց մոտ կանգնած անհատների գրպանները: Պետք է հստակ նշվի, որ արտագաղթի հիմնական պատճառը մեր իշխանությունների եւ օլիգարխիայի կիսաքրեական համաձուլման արդյունքում ստեղծված համատարած անարդարությունների համակարգն է:

Ինչ վերաբերում է համաժողովի օրակարգի թիվ 2 հարցին, ապա մեր կարծիքով նախ պետք է հիմքեր ստեղծվեն հասարակության միասնականության, համախմբվածության համար, որը հայրենիքի պաշտպանության համար ամենակարեւոր գործոնն է: Այնինչ հավասարության ու միասնության մասին խոսք լինել պարզապես չի կարող: Առաջին հայացքից անգամ ակնհայտ երեւում է, որ բոլոր պաշտոնական ու ոչ պաշտոնական հրապարակումներում թե՛ ապրիլյան օրերին, թե՛ դրանից առաջ ու հետո էլ դիրքերում զոհվել կամ վիրավորվել են մեծամասամբ ամենաանապահով խավի զավակները: Պետք է վերջ տրվի նաեւ տխուր մի իրողության, որն ստեղծվել է մեր բանակում: Պաշտոնատար անձանց երեխաները հիմնականում չեն ծառայում բանակում, իսկ միջին ծառայողական ու ֆինանսական հնարավորությունների տեր ծնողների որդիները ծառայում են ամենաապահով տեղամասերում: Ընդհանրապես, բանակում ստեղծվել է մի արատավոր համակարգ, որի ծայրագույն, ամենապատասխանատու եւ ամենավտանգավոր օղակում ծառայում են բացարձակապես ամենաընչազուրկ խավի զավակները: Սրանք հարցեր են, որոնք, այո, համահայկական հնչողություն ունեն եւ թույլատրելի սահմաններում պետք է քննարկվեն եւ լուծումներ գտնեն:

❖❖❖

Մի կարեւոր խնդիր էլ կա: Համաշխարհային փորձը ցույց տվեց, որ միաբեւեռ կառավարվող աշխարհն ավելի վտանգավոր ու անկառավարելի կարող է դառնալ, քան երկբեւեռը կամ բազմաբեւեռը: Սա միանշանակ վերաբերում է նաեւ Սփյուռքին: Ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ տեւական ժամանակ է, որ փաստորեն (de facto) Սփյուռքը մեծ մասամբ ուղղորդվում է մեկ քաղաքական ուժի կողմից: Մեկ այլ դեպքում գուցե թե սա դրական արդյունք ապահովեր: Սակայն, թեկուզ գիտակցության մեջ, բայց դեռեւս իր արեւմտահայաստանյան արմատներին ամուր կառչած Սփյուռքն իր անցյալով, կայուն ու արմատացած սովորույթներով, քաղաքական, կրթական կառույցներով եւ ժառանգականության կարծրացած գործոնով այլ արդյունք է տալիս:

Ձեւավորման առաջին տարիներից սկսած Սփյուռքում հստակ էր մեկ բան. բոլոր (կամ գրեթե բոլոր) գաղթօջախներում գործում էին ՌԱԿ, ՍԴՀԿ եւ ՀՅԴ կուսակցությունները, որոնք ունեին իրենց դպրոցները, թերթերը, ակումբները եւ այլ ենթակառույցներ: Ճիշտ է, նրանց միջեւ գոյություն ունեին որոշ տարաձայնություններ, որոնք երբեմն նույնիսկ վերածվում էին հակադրության եւ առիթ դառնում ցավալի իրողությունների, սակայն հիմնականում նրանք գտնվում էին մշտական մրցակցության մեջ, որն էլ ստիպում ու ապահովում էր զգոնություն, ներքին ամուր կարգապահություն եւ այլն, որոնք ավելի ներկայանալի էին դարձնում այդ կուսակցություններին: Այդ մրցակցության առկայությունն էլ իր հերթին ստիպում էր, որ որեւէ կուսակցության անդամ հասարակությանը ներկայանար լավագույն հատկանիշներով եւ իր հերթին պատիվ բերեր իր կուսակցությանը:

Իրերի բերումով այնպես ստացվեց (դա քննարկման այլ թեմա է, որին կանդրադառնանք մեկ այլ առիթով), որ, ՌԱԿ-ը 1995-ականներից հայտնվեց ներքին պառակտումների հորձանուտում (ՍԴՀԿ-ն մինչ այդ էլ արդեն զգալիորեն թուլացել էր) եւ խիստ թուլացավ: Այդ ոչ ցանկալի գործընթացն այսօր էլ ցավոք շարունակվում է: Ամենազարմանալին այն է, որ գաղափարական, կանոնադրական որեւէ հարցի շուրջ որեւէ հակասություն կամ լուրջ տարաձայնություն չկա: ՌԱԿ-ը, որ հաջողված ու կայուն համաշխարհային կառույցներ, կարող ուժեր եւ լուրջ ռեսուրսներ ունի, այսօր զգալիորեն զիջել է իր դիրքերը: Մի տխուր իրողություն, որը պատմաբանիս կարծիքով հար եւ նման է Ա. Ահարոնյանի գլխավորած ՀՀ Առաջին Հանրապետության եւ Պողոս Նուբարի Ազգային պատվիրակությունների միջեւ ստեղծված ցավալի իրավիճակին, որը հանգեցրեց «Հայ-հայկական» կոչված զավեշտական բանակցություններին:

Այդ իրավիճակը նույնիսկ ձեռնտու չի բավականին արտոնյալ վիճակում հայտնված ՀՅԴ-ին: Այդ մասին մեր հանդիպումներից մեկի ժամանակ նշեց ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ **Հրանտ Մարգարյանը** ասելով, որ ՌԱԿ-ի թուլացման հետեւանքով իրենք զրկվել են լուրջ մրցակցությունից եւ կորցրել ավելի լավը եւ զգոն լինելու ձգտումը:

⇨10

AZG NEW SHABAT.QXD 06/09/2017 21:12 Page 10



# Վիրտուալի անտեսանելի ոստայնը

ՆԱԻՐ ՅԱՆ

Հոգեբանները զենքերը վայր են դրել. եկել է մի սերունդ, որին դժվար է հոգեբանությանը մինչեւ հիմա հայտնի եւ գործածված մեթոդներով ղեկավարել կամ հասկանալ: Խոսքը վերաբերում է հատկապես վերջին տասը տարում ծնված սերնդին: Թեեւ դրանից առաջ ծնվածներին էլ չի կարելի համարել սովորական սերունդ: Ընդհանրապես յուրաքանչյուր սերունդ պետք է գերազանցի նախորդին, բայց մեր օրերի երեխաներն իրենց մտածելակերպով, հոգեբանությամբ, խառնվածքով ու տեսակով հոգեբաններին ստիպում են մոռանալ բոլոր ավանդական ու անհատական մեթոդները, առավել եւս մարդու ներաշխարհը վերլուծելու եւ նրան տեսակավորելու վաղուց սահմանված կանոնները: Աշխարհի հոգեբաններն անգամ ֆորումներ են անց կացնում՝ խելք խելքի տալու եւ պարզելու նոր սերնդի տեսակը, նրա մտածողությունը, նախասիրությունները, առանձնահատկությունները: Հոգեբանների մասնագիտությունը եւս վտանգված ու կասկածի տակ է առնված: Երեխա-ծնող, երեխա-ուսուցիչ, երեխա-երեխա, երեխա-արտաքին աշխարհ կապերը դուրս են եկել վերահսկողությունից, աղավաղվել, բնականոն զարգացումից շեղվել: Ու դա համատարած է. դեպքերը բացառիկ ու եզակի չեն: Իսկ հոգեբաններին դիմելու դեպքում էլ հրաշքներ չեն կատարվում: Դրանից է, որ նրանք իրար են անցել ու փորձում են հասկանալ մերօրյա մարդու միտքը, նպատակները, դրանցից բխող հետեւանքները:

Ինչո՞ւ եւ ինչո՞վ են այդքան տարբեր այսօրվա երեխաները. նույն հոգեբանները բազմաթիվ պատճառներ են առաջ քաշում: Առանցքային պատճառներից մեկը համակարգիչն է, որը երեխային կտրում է իրական իրականությունից: Վիրտուալ աշխարհը բառացիորեն իշխում է նրա մտքի, հոգու, էության վրա. վիրտուալ է դառնում անգամ երեխայի զգայական աշխարհը: Այդ աշխարհում մարդկային իրական փոխհարաբերություններ չկան, անգամ ծնող-երեխա կապն է խեղվում: Երեխան հարազատ մոր զգացմունքները, նրա լավ ու վատ տրամադրությունն ընկալում է իր համակարգչային խաղերի հերոսների օրինակով՝ փորձելով իրական ծնողի ու վիրտուալ հերոսների միջեւ ընդհանրություններ, նմանություններ, անգամ նրանց արարքների նույնականություն գտնել:

Շատ ծնողներ հիացած պատմում են, թե իրենց մի քանի ամսական երեխան ինչպես է կարողանում համակարգիչը միացնել-անջատել, հեռախոսն ու պլանշետ տեսնելիս ինչքան է ոգեւորվում, իսկ խաղալիքի նկատմամբ բացարձակ անտարբեր է: Իրականում հենց այստեղից է սկսվում երեխայի մեկուսացման, բնական ու իրական կյանքից հրաժարվելու նախնական դրսեւորումը, որը տարիների ընթացքում ավելի ու ավելի է խորանում:

Շատ ծնողների թվում է, թե իրենց երեխան շատ խելոք եւ ուշիմ է, դե ուրիշ ինչպե՞ս նկարագրես այն երեխային, որը ժամերով անշարժ նստած է համակարգչի առաջ, ոչ վազվզում ու սենյակն է թափթփում, ոչ տարօրինակ հարցերով մայրիկ-հայրիկի գլուխն է տանում ու ոչ էլ ընկերների հետ մանկական չարաճճիություններ է անում: Ծնողները կարծում են, թե այդպիսով իրենց երեխան զերծ է մնում դրսի աշխարհի բացասական ներգործություններից, իր հասակակիցների հետ ծեծկռտուքներից ու վեճերից: Իրականում կա մի կարեւորագույն օղակ, որը մեծ դեր է խաղում երեխայի սոցիումի հարցում: Բակ: Բակում երեխան նախապատրաստվում է ավելի հասուն տարիքում իր նմանների հետ փոխհարաբերություններին, բակում նա դրսեւորում է իր հատկանիշները, բնավորությունը, բակային խաղերի ժամանակ



ցույց է տալիս իրավիճակն ընկալելու, դժվար կացությունից դուրս գալու, տարեկիցների հետ լեզու գտնելու, ուժերը չափելու ունակությունները: Բակային խաղերում ու բակում իր տարեկիցների հետ շփումներում երեխան մրցակցելու, առաջ մղվելու հմտություններ է ձեռք բերում: Բակային խաղերում հավանականությունը մեծ է, որ երեխան կընկնի, կվնասվի, ընկերների հետ կվիճի ու կկռվի, հաղթանակի հասնելու համար թույլի եւ ուժեղի միջեւ պայքարն իրական ու միգուցե ցավոտ կլինի, բայց դա է հենց հետագա մեծ կյանքի նախապատրաստական շրջանը. բակը կյանքի մանրակերտն է, որի տիրույթում ինքնադրսեւորվելու եւ փորձ ձեռք բերելու դեպքում երեխան կոփվում, թրծվում, բարոյապես ու հոգեպես ամրանում է:

Համակարգչային խաղերի վիրտուալ հնարավորություններին սովոր երեխան մատի հպումով իրեն է ենթարկեցնում խաղի բոլոր կանոններն ու իր հետ «մրցող» հերոսներին: Նրանք բոլորն էլ խամաճիկի պես կատարում են երեխայի հրամանները: Երեխան հեշտությամբ է հասնում երանելի հաղթանակին: Ողբերգությունն սկսվում է այն ժամանակ, երբ երեխան իրական կյանքում իր ուժերը փորձում է իրական մարդկանց ու հանգամանքների հետ: Այստեղ է, որ բախվում են իրական ու վիրտուալ աշխարհները, եւ համակարգչային կյանքի սարքովի «դժվարությունները» հեշտությամբ հաղթահարող երեխան դեմ հանդիման կանգնում է իրական դժվարություններին, շոկ ապրում, թե ինչու ոչ ոք չի ենթարկվում իրեն: Նա ընկճվում, թեւաթափ է լինում ու զենքերն արագ վայր դնում: Վիրտուալ աշխարհում նա ամենակարող է, իսկ իրական պայքարում երեխան գիտակցում է իր անզորությունը , եւ թերարժեքության, սեփական ուժերին չհավատալու զգացումները ներխուժում են երեխայի ներաշխարհ: Իրարամերժ, խորթ զգացողություններն ագրեսիայի համար նպաստավոր պայմաններ են ստեղծում, ու արտաքին աշխարհի առաջին իսկ անհաջող հանդիպումը երեխային ստիպում է այդ աշխարհից հեռու մնալ: Նրան պատում է չհասկացված, մերժված լինելու զգացումը, ինչի պատճառով էլ երեխան սիրով վերադառնում է վիրտուալ աշխարհ, որտեղ ինքը մենակ է ու իր մենակության մեջ՝ զորեղ: Իսկ եթե ծնողները, դպրոցն այդ պահերին չփորձեն հասկանալ երեխային ու նրան ձեռք չմեկնեն, ողբերգությունը պատրաստ է: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ ահաբեկչություն, զանգվածային սպանություններ, անձի հետապնդումներ իրականացնողները մեծ մասամբ չստացված կյանք, ընտանիքի, միջավայրի կողմից չհասկացված, մեկուսացած մարդիկ են, որոնք անձնական մեծ ողբերգություն են ապրել:

Մեր երկրում այս երեւույթները դեռ ահագնացող չափերի չեն հասել, մեր բակերում դեռ կարելի է գտնել հատուկենտ երեխաների: Մեր ազգային հոգեկերտվածքը, բարոյական արժեքները, երեխայապաշտ լինելը թույլ չեն տալիս անդառնալի հեռուն գնալ, բայց կասկածելի է՝ արդյո՞ք հաջորդ սերունդն այդ չափանիշների կրողը եւ արտահայտողը կլինի իր երեխայի նկատմամբ:

Պատկերն ավելի ողբերգական է քաղաքակիրթ Եվրոպայում, որտեղ երեխաները մեծանում են իրենց տան չորս պատերից ներս՝ չհաշված մանկապարտեզում ու դպրոցում անցկացրած մի քանի ժամը: Զարգացած երկրներում բակային խաղերի, տարեկից երեխաների շփումների, մտերմության սովորույթներ չկան, չնայած խաղահրապարակները, երեխաների ժամանցի վայրերն ամեն քայլափոխի են: Եվրոպացիները միմյանց տեսնելիս ժպտում են. այդ հատկանիշը բարեկրթության նշան է: Բայց այդ սինթետիկ ժպիտով հանդերձ՝ նրանք կարող են ոստիկան կանչել, երբ զբոսայգու նստարանին նստած լրագիր կարդացող հայրիկն իր երեխային հորդորի մոտենալ ու խաղալ իր տարեկից մեկ այլ երեխայի հետ:

Համակերպվելու հատկանիշը բնորոշ է մարդուն. հարմարվելու միջոցով է մարդը ինտեգրվում տվյալ միջավայրին, պայմաններին ու զարգանալու, առաջ շարժվելու, փոփոխություններ իրականացնելու ձգտումներ դրսեւորում: Սակայն մեր դարը բնորոշվում է մի բացասական երեւույթով, որ կոչվում է անտարբերություն: Անտարբերությունը եւս հարմարվելու դրսեւորումներից մեկն է, բայց որի հետեւանքներն արդեն աղետալի են դառնում : Մարդկությունը ոչ միայն հարմարվել է ահաբեկչություններին, մարդածին արհավիրքներին, այլեւ անտարբեր դարձել դրանց նկատմամբ: Մենք հասել ենք նրան, որ մարդկության քայլերը դադարել են լինել մարդակենտրոն: Մարդն այլեւս գերագույն արժեք չէ: Նրան կարող է փոխարինել թանկարժեք ավտոմեքենան, պալատը, նյութական ցանկացած մեծ ու փոքր միավոր: Օրինակ, եթե երթուղայինի վարորդը մեկ այլ երթուղայինից ուղեւոր փախցնելու համար երթեւեկության կանոնները խախտում, սահմանված արագությունը գերազանցում է, նշանակում է նրա համար կարեւորվում է ոչ թե մարդը, այլ հարյուր դրամը, որի համար նա պատրաստ է վտանգել մարդկանց կյանքերը:

Աշխարհաքաղաքական բոլոր քայլերը, ՏՏ ոլորտի թռիչքային զարգացումները, տնտեսական ու սոցիալական «բարեփոխումները»՝ ամենամեծից մինչեւ փոքր, ոչ մարդակենտրոն ու ոչ մարդանպաստ են: Սրա հիմքում միայն նյութականի, փառքի, իշխանատենչության ձգտումները չեն, այլ մարդուն իր նմանից հեռացնելու հեռահար նպատակը: Ընտանիքի, համայնքի, ժողովրդի, ազգի մոդելներն աստիճանաբար աղճատվում են: Ազգություն, լեզու, կրոն, ավանդույթներ, հայրենիք, ծնողներ հասկացություններով են առանձնանում ազգերը: Իսկ աշխարհանվաճման այսօրվա ծրագրերում նման վեհ գաղափարները խանգարիչ դեր են կատարում: Անսեռ, անդեմ, աննկարագիր, միատարր ու միանման զանգված է հարկավոր, որին հնարավոր կլինի իշխել ու ենթարկեցնել վիրտուալ գործիքներով: Իսկ այդ զանգվածի տարրերը չպետք է հարազատական, զգայական, մտավոր, հոգեւոր որեւէ կապով կապված լինեն միմյանց: Մեր շատ տներում այլեւս չկա զրույց, քննարկումներ, մտքերի փոխանակում, կատակ ու աշխուժություն: Ընտանիքի բոլոր անդամները տանն են, բայց լռություն է տիրում. հատկապես երիտասարդներն ու երեխաները չեն շփվում իրար հետ: Ամեն մեկը սավառնում է վիրտուալ աշխարհի իր տիրույթում, իսկ մարդկային պարզ, ընտանեկան, ընկերական շփումները նվազագույնի են հասցված՝ լավագույն դեպքում՝ մամ, սոված եմ, պապ, փող տուր: Անեկդոտի վերածված դառը ճշմարտություն կա. «Երկու ժամով տան ինտերնետն անջատվեց: Պարզվեց՝ մեր ծնողները լավ էլ հետաքրքիր մարդիկ են»:

## Մտորումներ Հայաստան-Սփյուռք համաժողովի նախօրեին

⇨9

Այնպես որ, խնդիրը շատ պարզ է ու հստակ, սակայն դեռեւս վերջնական լուծման կարոտ: Երկար ծանր ու թեթեւ անելուց, թեր ու դեմ կարծիքները քննարկելուց եւ անձնական դիտարկումների եւ ունեցած ինֆորմացիայի հենքի հիման վրա մեզ թույլ ենք տալիս եզրակացնելու, որ հզոր Հայաստան եւ ուժեղ Սփյուռք ունենալու դեպքում միայն հնարավոր կդառնա համահայկական կառույցի իրատեսական գործունեություն: Այսինքն՝ Սփյուռքում ստեղծված ներկա կիսաս-պռաս վիճակը հազիվ թե լավ բանի հանգեցնի: Այդ, հարկավոր է սկսել արդեն գոյություն ունեցող կազմակերպությունների, այդ թվում՝ կուսակցությունների առողջացումից եւ հզորացումից: Մի գործընթաց, որը ոչ թե պարզունակ վերադարձ կլինի «ի շրջանս յուր», այլ իր խնդիրներով ու նպատակներով պայմանավորված բոլորովին նոր որակ ապահովող շրջադարձ: Համախմբվելու, ուժեղանալու եւ նորովի ներկայանալու խնդրի լուծմանը պետք է ուղղվեն ՌԱԿ-ի բոլոր առողջ ուժերի ջանքերը: Կարծում եմ նաեւ, որ համաժողովի նախօրեին կարելի է օգտագործել ստեղծված հնարավորությունը եւ դրան ներկայանալ ավելի համախմբված ու միասնական, որը հնարավորություն կընձեռնի ամբողջովին օգտագործել ՌԱԿ-ի աշխարհասփյուռ կառույցներն ու հսկայական ներուժը ի շահ եւ ի բարօրություն համայն հայության ու մեր սրբության սրբոց պետականության:

AZG NEW SHABAT.QXD 06/09/2017 21:12 Page 11



# Թուրքիան կարող է դառնալ Հայաստանի գործընկերը

## *Էրդողանը հետաձգեց Բաքու կատարելիք այցը*

Բաքվում Թուրքիայի դեսպան **Էրքան Օզորալը** հայտարարել է, որ նախագահ Էրդողանը հետաձգել է սեպտեմբերի 10-11-ը Ադրբեջան կատարելիք այցը, որտեղ մասնակցելու էր Ադրբեջան-Թուրքիա Ռազմավարական համագործակցության խորհրդի վեցերորդ նիստին: Նա պետք է նաեւ բանակցեր նախագահ Ալիեւի հետ: Համագործակցության խորհրդի նիստի հետաձգումն անցյալում միշտ կապված է եղել անհաղթահարելի դժվարությունների ծագման հետ: Այսպես, հինգերորդ նիստը չէր կայացել Անկարայում կատարված ահաբեկչության պատճառով: Իսկ ի՞նչ է պատահել այս անգամ:

Դեսպան Օզորալը այցի հետաձգումը պատճառաբանեց Էրդողանի խիստ զբաղվածությամբ: Ընդսմին նա չպատմեց մանրամասնությունների մասին, ինչն անմիջապես զանազան մեկնաբանությունների առիթ դարձավ փորձագետների շրջանում: Վարկածներից մեկի համաձայն, դա չունի քաղաքական աստառ եւ կապված է Էրդողանի առողջական վիճակի հետ: Բայց այս տեսակետը քննադատության չի դիմանում: Ինչպես նշում է «Ռեգնում» գործակալությունը, Էրդողանը միանգամայն առողջ է եւ ակտիվորեն մասնակցում է իր երկրի քաղաքական կյանքին: Թուրք փորձագետ **Հասան Օքթայի** խոսքերով, այցի հետաձգման պատճառը պետք է փնտրել մեկ այլ կարեւոր բանում, որի մասին նախընտրում են լռել:

Ռուս փորձագետ **Ստանիսլավ Տարասովի** դիտարկման համաձայն, խոսքը Ռազմավարական համագործակցության խորհրդի ավելի վաղ մշակված օրակարգի փոփոխման մասին է: Ի դեպ փոփոխված քաղաքական հանգամանքների մասին ակնարկել է ինքը՝ դեսպան Օզորալը: Նրա խոսքերով, «ներկայումս քննարկվում է ԵԱՏՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցը, որն ունի քաղաքական իմաստ»: Ավելին, Անկարան մտադիր է մինչեւ տարեվերջ մաքսային համաձայնագիր ստորագրել ԵԱՏՄ-ի հետ: Այդ մասին արդեն հայտարարել է էկոնոմիկայի նախարար **Նիհաթ Զեյբեկչին**: Օքթայը իր հերթին նշում է, որ Թուրքիայի համար կարեւոր է տեղ զբաղեցնել միջազգային համակարգում եւ օգտվել դրա ընձեռած բոլոր հնարավորություններից, երկիրը ներկայումս գտնվում է միջհամակարգային վիճակում:

Անշուշտ չի կարելի բացառել թուրքական դիվանագիտության հնարավոր բլեֆը, որով խաղարկվում է մերթ եվրոպական, մերթ էլ ռուսական խաղաքարտը: Սակայն Գերմանիայի կանցլեր **Անգելա Մերկելը**, ով ամենայն հավանականությամբ հաղթելու է սեպտեմբերի 24-ի ընտրություններում, հայտարարել է, որ ԵՄ առաջիկա գագաթաժողովում պետք է քննարկվի Եվրոմիությանը Թուրքիայի հնարավոր անդամակցության բանակցությունների դադարեցման հարցը: Իսկ Գերմանիայի արտգործնախարար **Զիգմար Գաբրիելը** ընդգծել է, որ քանի դեռ Էրդողանն է ղեկավարում Թուրքիան, այդ երկիրը չի ունենա ԵՄ-ին անդամակցելու հնարավորություն: Քանի որ ԵՄ-ից Մեծ Բրիտանիայի դուրս գալուց հետո Անկարան կորցրեց իր գլխավոր դաշնակցին, Եվրոպայի դարպասը երկար ժամանակ փակ կլինի նրա առջեւ: Բացառված չէ, որ մոտ ժամանակներս կրճատվի նաեւ Թուրքիայի առեւտրատնտեսական համագործակցությունը Բրյուսելի հետ:

Նման պայմաններում Թուրքիայի տեղաշարժը դեպի ԵԱՏՄ թվում է միանգամայն բնական եւ տրամաբանական: Սակայն այդ ճանապարհին կանգնած է ԵԱՏՄ լիիրավ անդամ Հայաստանը, որը կարող է Թուրքիայի անդամակցությանը համաձայնել որոշակի պայմաններով, օրինակ՝ դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը եւ սահմանների բացումը: Բայց կարող է նաեւ դեմ լինել: Հենց սա է գլխավոր ինտրիգը: Այսպիսով, Անդրկովկասում կարող է առաջանալ միանգամայն նոր աշխարհաքաղաքական իրադրություն: Եթե անցյալում Անկարան Բաքվի թելադրանքով Երեւանին հարաբերությունների կարգավորման պայմաններ էր առաջադրում դրանք շաղկապելով Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման հետ, ապա այժմ Թուրքիային պայմաններ առաջադրել կարող է ինքը՝ Հայաստանը: Պատահական չէ թուրքական Daily Sabah թերթի այն պնդումը, թե Էրդողանը Բաքու կարող է այցելել միայն Աստանա մեկնելուց հետո, որտեղ կքննարկվեն ԵԱՏՄ-ի հետ Թուրքիայի համագործակցության հարցերը:

Լայն իմաստով ԵԱՏՄ-ին անդամակցելու դեպքում Թուրքիան երբեք հանդես չի գա գլխավոր դերում, նկատի ունենալով Ռուսաստանն ու Ղազախստանն ու նրանց գործընկերությունը Հայաստանի հետ: Անկարայի Միջազգային ռազմավարական հետազոտությունների եվրասիական քաղաքականության փորձագետ **Քերիմ Հասը** գրում է, որ գոյություն ունեցող ռուս-թուրքական դաշինքը դեռ վերջերս ամրապնդում էր նաեւ Ադրբեջանի դիրքերը: Տարօրինակն այն է, որ Բաքուն կարող է տեղը զիջել Երեւանին որպես ռուս-թուրքական հարաբերություններում կողմերին կապող օղակներից մեկը: Նույնիսկ «Շահդենիզ-2» գազի հանքավայրի նախագծային կարողության հասնելու դեպքում Բաքուն կարող է չբավարարել Թուրքիային անհրաժեշտ գազի ծավալները: Վերջինս ստիպված է պակասը լրացնել ռուսական վառելիքով: Իսկ «Թուրքական հոսք» գազամուղի գործարկումից հետո Բաքվից Անկարայի կախվածությունը կնվազի, որի հետեւանքը կարող է դառնալ Բաքվի հանդեպ Անկարայի տոնայնության փոփոխությունը:

Բաքվում արդեն գրում են, որ «Թուրքիայի եւ Ադրբեջանի քաղաքական տրամաբանություններն ու իրողությունները եւ նույնիսկ շահերը միշտ չէ, որ համընկնում են»: Հիմա մնում է սպասել եւ տեսնել, թե ինչպես է Թուրքիան հարաբերություններ ձեւավորում Հայաստանի հետ:

**Պ.Ք.**

# Լավրովը Բաքվի զրոհների թիրախ

## *Անդրկովկասում ո՞վ է հայտնվում աշխարհաքաղաքական ծուղակում*

Օրերս թուրքական Milliyet թերթի հրապարակած հոդվածում պնդում է արվում, թե ԱՄՆ-Ռուսաստան եւ ԱՄՆ-Իրան հարաբերությունների միաժամանակյա վատացումը, ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների խնդիրը անխուսափելիորեն կազդեն ուրիշ տարածաշրջանների եւ հարցերի վրա, մանավանդ՝ Մերձավոր Արեւելքում եւ Հարավային Կովկասում:

Եթե խոսենք Մերձավոր Արեւելքի մասին, ապա Սիրիայի ուղղությամբ գործում է Ռուսաստան-Թուրքիա-Իրան դաշինքը, մինչդեռ Անդրկովկասում այդ երեք երկրները պատմականորեն հանդես են եկել որպես մրցակիցներ: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո այդ տարածաշրջանում զգալիորեն ուժեղացավ Թուրքիայի ազդեցությունը, սակայն ոչ թե միանձնյա կերպով, այլ արեւմտյան դաշնակիցների եւ առաջին հերթին ԱՄՆ-ի աջակցությամբ: Ընդ որում Իրանը երկար ժամանակ պատժամիջոցների ազդեցության տակ էր, նախ եւ առաջ՝ իր միջուկային ծրագրի պատճառով: Տարածաշրջանի խնդիրները Ռուսաստանին առնչվում էին անուղղակիորեն, այն էլ՝ Լեռնային Ղարաբաղի խնդրի պատճառով:

1990-ականներին Մոսկվայում առհասարակ չկար անդրկովկասյան կամ մերձավորարեւելյան քաղաքականություն: Նույնիսկ ավելի ուշ Ռուսաստանը բավական զգուշավոր դիրք էր բռնել այս առումով: Սիրիայի ճգնաժամին նրա մասնակցությունը դրա ապացույցն է:

Այսօր փաստացի է դառնում Մեծ Մերձավոր Արեւելքի իրադարձությունների ազգայնացումը արտաքին եւ տարածաշրջանային ուժերի մասնակցությամբ: Բայց եթե Ռուսաստան-Թուրքիա-Իրան դաշինքում Սիրիայի ուղղությամբ նկատելի է Մոսկվայի առաջատար դերը, ապա հայտնի չէ՝ կպահպանի՞ նա արդյոք այդ դերը Անդրկովկասում Թուրքիայի եւ Իրանի մրցակցության պայմաններում: Մանավանդ որ այդ եռանկյան ներսում գոյացել են ուրիշ դաշինքներ՝ Ռուսաստան-Հայաստան եւ Թուրքիա-Ադրբեջան: Հիմա խնդիրն այն է, թե կփոխե՞ն արդյոք իրենց տարածաշրջանային քաղաքականությունը Հայաստանն ու Ադրբեջանը:



Երեւանը Մոսկվայի դաշնակիցն է ՀԱՊԿ-ի գծով եւ ԵԱՏՄ անդամ է: Այս առումով Երեւանը պաշտոնական որեւէ հայտարարությամբ երբեւէ չի մտահոգել Մոսկվային, թեեւ վերջինս նկատում է Երեւանի ընդլայնվող համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ: Դեպի Արեւմուտք կատարվող տեղաշարժի մասին Երեւանում բարձրաձայնում է միայն ընդդիմությունը: Բայց այն պայմաններում, երբ Արեւմուտքը ձեռնարկում է հակառուսական պատժամիջոցներ եւ պետականաշինության առաջարկներ է անում, տպավորություն է ստեղծվում, թե Երեւանը կանգնած է ընտրության առջեւ:

Բավական բարդ իրավիճակում է հայտնվել նաեւ Ադրբեջանը: Հույսը դնելով Արեւմուտքի հետ հարաբերությունները բարդացնող Թուրքիայի վրա, նա գիտակցում է, որ այսպես կոչված բազմավեկտոր քաղաքականություն վարելու իր հնարավորությունները սահմանափակվում են: Ինչպես գրում է բաքվեցի փորձագետ **Հուսեյնբալա Սալիմովը**, «Թուրքիայի եւ Ադրբեջանի քաղաքական տրամաբանություններն ու իրողությունները եւ նույնիսկ շահերը միշտ չէ, որ համընկնում են»: Ուստի Թուրքիայի նավարկուղիով Ադրբեջանի շարժվելը բարդություններ է ստեղծում Արեւմուտքի հետ վերջինիս հարաբերություններում:

Ռուս-թուրքական դաշինքը Բաքվի համար դժվարացնում է Լեռնային Ղարաբաղի հարցում շեշտը ուժային գործոնի վրա դնելը: Վերջինս կարող է իր հրատապությունը պահպանել, եթե Ադրբեջանը միանշանակ կերպով կողմնորոշվի դեպի Արեւմուտք, կարծում է ռուսաստանցի փորձագետ **Ստանիսլավ Տարասովը**: Բայց այդ դեպքում ճաք կտան նրա հարաբերությունները Թուրքիայի, Ռուսաստանի եւ Իրանի հետ: Իսկ եթե Հայաստանը մնա Ռուսաստանի ազդեցության ոլորտում, ապա ոչ միայն կպահպանի սուբյեկտի կարգավիճակը տարածաշրջանի քաղաքական մեծ խաղում, այլեւ կկարողանա Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման հեռանկար ունենալ Իրանի հետ փոխգործողության պայմաններում:

Ճիշտ է, գոյություն ունի նաեւ այլընտրական սցենար: ԱՄՆ-ը, հասկանալով Մերձավոր Արեւելքում Թուրքիայի կարեւոր դիրքը, կարող է այդ երկրում պետական հեղաշրջման եւս մեկ փորձ հրահրել, իսկ Հայաստանում եւ Ադրբեջանում ուժեղացնել այսպես կոչված «արեւմտյան կուսակցության» գործունեությունը Իրանի դեմ պատերազմի սանձազերծման սպառնալիքի ֆոնի վրա: Սակայն Վաշինգտոնի նմանօրինակ քաղաքականության դեպքում անգամ Մերձավոր Արեւելքում խոչընդոտ կդառնա քրդական խնդիրը, իսկ Անդրկովկասում՝ ԼՂ հակամարտության կարգավորման հնարավորությունները:

Տարասովի կարծիքով, հենց սրանով է բացատրվում Բաքվի տեղեկատվական հարձակումը ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի վրա: Բանն այն, որ ավելի վաղ, Մոսկվայի Միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտում ունեցած ելույթում Լավրովը Արեւմուտքին մեղադրել էր ԼՂ հակամարտության լուծման ուղիով շարժվելուց հրաժարվելու մեջ: ՌԴ ԱԳՆ-ն նաեւ հրաժարվել էր ընդունել Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի դիրքորոշումների տարբերությունները ԼՂ հակամարտության լուծման հեռանկարների հարցում:

«Ռեգնում» գործակալությունը նշում է, որ հիմա արդեն Լավրովին ամբաստանում են այն բանում, թե նա ՌԴ ԱԳՆ-ում գրեթե «հայկական լոբբի» է ստեղծել Հայաստանի քաղաքական վերնախավի արեւմտամետ ճամբար անցնելու պայմաններում:

Լեռնային Ղարաբաղի եւ այլ խաղաքարտեր խաղարկելու Մոսկվայի եւ Վաշինգտոնի նմանօրինակ ազդանշանները հասցեագրված են առաջին հերթին Անկարային եւ Թեհրանին: Դրա հետ մեկտեղ դեսուդեն է ընկնում նաեւ Բաքուն, որը մոտ ժամանակներս ստիպված կլինի կարեւոր որոշումներ ընդունել արտաքին քաղաքական ուղեգծի փոփոխման վերաբերյալ:

**Պ.Ք.**

AZG NEW SHABAT.QXD 06/09/2017 21:12 Page 12



# «Արգելված ուղեւորություններ» ֆիլմը նվիրված Մայքլ Հակոբյանին



Հայագիտական ուսումնասիրությունների եւ հետազոտությունների NAASR ընկերակցության կազմակերպությամբ 1967-ին մի խումբ ամերիկահայեր Մայքլ Հակոբյանի առաջնորդությամբ առաջին անգամ այցելեցին պատմական Հայաստան իրենց արմատների հետքերը որոնելու նպատակով: **Մայքլ Հակոբյանը** վավերագրական ֆիլմ նկարահանեց այդ ժամանակ, Եղեռնից հետո առաջին անգամ հայրենիք այցելած այդ մարդկանց մասին:

Հոկտեմբերի 1-ին Լոս Անջելեսի Կալիֆոռնիա համալսարանի «Մելնից» դահլիճում ցուցադրվելու է հատվածներ այդ ֆիլմից: Միաժամանակ ցուցադրվելու է 2013-ին նկարահանված Հովհաննիսյան-Գեւորգյանի կարճամետրաժ ֆիլմը, որտեղ նա պատմում է, թե ինչպես պատմական Հայաստան կատարած իր այցելության ժամանակ հանդիպել է Հոսլանդացի մի հետախույզ-լուսանկարչի, որն արդեն 30 տարի վավերագրելիս է եղել այդ կորուսված աշխարհից մնացած հետքերը: Այդ օրվանից ի վեր նրանք միասին աշխատել են հայտնաբերելու համար այդ մոռացված աշխարհի գաղտնիքները:

Ֆիլմերի ցուցադրությունից հետո, ըստ տեղեկատվության, տեղի է ունենալու քննարկում, որին մասնակցելու են ՆԱԱՍՐ-ի գիտական հարցերի տնօրեն **Մարկ Մամիկոնյանը**, Հայկական ֆիլմ հաստատությունից՝ ռեժիսոր դոկտ. **Կառլա Կարապետյանը**, UCLA-ի դասախոսական կազմից **Փիթեր Քաուին** եւ **Սեպուհ Ասլանյանը**:

Միջոցառման հովանավորն է UCLA-ի արդի հայ պատմության ամբիոնն ու Արարատ-Էսքիջյան թանգարանը:

Հ. Ծ.

# Եռօրյա միջազգային կոնֆերանս Ֆրեզնոյում՝ «Հայերը, հույներն ու քրդերը Օսմանյան կայսրությունում»

Ֆրեզնոյի պետհամալսարանի Արվեստի եւ հումանիտար առարկաների քոլեջի եւ պատմության ֆակուլտետի հովանավորությամբ եւ Թոմաս Գույումճյան, Լեւոն Պիտեր եւ Վիկտորիա Քազան հիմնադրամների աջակցությամբ եռօրյա միջազգային կոնֆերանս է անցկացվելու Ֆրեզնոյի համալսարանի բիզնես կենտրոնում սեպտեմբերի 22-ին եւ 23-ին՝ նվիրված Օսմանյան Թուրքիայում ապրող հայերին, հույներին եւ քրդերին: Կազմակերպիչներն են համալսարանի հայկական ուսումնասիրությունների ծրագրի համադրող պրոֆ. **Բառլոու Տեր-Մկրտչյանը** եւ Հարվարդ համալսարանի դասախոս դոկտ. **Ումիտ Քուրդը**:

Հայկական եւ օտար աղբյուրներ օգտագործելով հրավիրված մասնագետները խոսելու են հիմնականում երկրի տարբեր շրջաններում կազմավորված նախաեղեռնյան շրջանի համայնքների մասին:

Առաջին օրը ելույթներ են ունենալու Յունիոն համալսարանից **Օուեն Միլլերը** («Լեռների գաղութացումը: Սասուն, Զեյթուն եւ Դերսիմ»), Մանհեթենվիլ քոլեջից **Դեյվիդ Գուտմանը** («Խարբերդի բնակիչները տեղական եւ միջազգային խաչմերուկում») եւ **Ուգյուր Պեչեն** («Ոչ-մահմեդականների զինակոչումը 1908-1912 թվերին»):

Երկրորդ օրը զեկուցումներ են կարդալու Քլարք համալսարանից **Էմրե Ջան Դաղլիօղլուն** («Հակահայկական բռնությունները Օսմանյան կայսրությունում: Վանի 1895-ի կոտորածները»), Պրինստոն համալսարանից Վարագ Քեթսեմանյանը («Հայ հեղափոխական շարժումը: Հնչակյան կուսակցության ծրագիրը՝ 1890-96 թթ.»), եւ Հարվարդ համալսարանից **Ումիտ Քուրդը** («Այնթապի 1895-ի կոտորածները»):

Ընդմիջումից հետո երկու զեկուցողներ՝ **Նիլայ Օզոք-Գյունդողանն** (Ֆլորիդայի պետհամալսարանից) ու **Ջաներ Քըլըջը** (Ակրոն համալսարանից) եզրափակելու են կոնֆերանսը:

Մանրամասնությունների համար այցելել «www.fresnostate.edu/armenianstudies» կայքը:

Հ. Ծ.

# «Samsung Galaxy Note8» նոր սմարթֆոնը՝ նախնական պատվիրման հնարավորությամբ




**ՎիվաՍել-ՄՏՍ-ը տեղեկացնում է, որ մինչեւ ս.թ. սեպտեմբերի 21-ը ներառյալ «Samsung Galaxy Note8» պատվիրելու դեպքում գնորդը նաեւ կստանա «Samsung DeX» ակսեսուար:**

**«Samsung Galaxy Note8» սմարթֆոնի գինը 579 900 դրամ է: Սարքը կարելի է գնել թե՛ կանխիկ, եւ թե՛ ապառիկ եղանակով:**

**Պատվերը կարելի է տեղադրել առցանց կամ այցելելով ՎիվաՍել-ՄՏՍ-ի սպասարկման կենտրոն: Առցանց պատվիրելուց հետո անհրաժեշտ է մինչեւ ս.թ. սեպտեմբերի 21-ը ներառյալ այցելել մոտակա սպասարկման կենտրոն՝ վճարում կատարելու համար: Կանխիկ եղանակով գնման պատվերը տեղադրելիս՝ անհրաժեշտ է ամբողջությամբ վճարել սմարթֆոնի արժեքը, իսկ ապառիկի դեպքում՝ կանխավճարի գումարը (նախատեսված լինելու դեպքում) կրկին մինչեւ ս.թ. սեպտեմբերի 21-ը՝ ներառյալ:**

**Բաժանորդները կկարողանան ստանալ «Samsung Galaxy Note8» հեռախոսը եւ «Samsung DeX» ակսեսուարը՝ սկսած ս.թ. սեպտեմբերի 22-ից՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:**

**«Հերթական անգամ ՎիվաՍել-ՄՏՍ-ն իր բաժանորդներին հասանելի է դարձնում նոր բարձրակարգ սմարթֆոն, այս անգամ՝ «Samsung Galaxy Note8» սմարթֆոնը, որն առանձնանում է առաջադեմ լուծումներով եւ յուրահատուկ դիզայնով: Մեզ համար կարեւոր է, որ մեր բաժանորդները ցանկության դեպքում կարողանան օգտվել շարժական հաղորդակցության ամենանորարարական, բարձրորակ եւ հարմարավետ սարքերից»,-ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:**

**Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.mts.am կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել մեզ հետ «111 օնլայն» պորտալի միջոցով, կամ այցելել մեր սպասարկման կենտրոններից որեւէ մեկը: Մեր նորություններին մշտապես ծանոթ լինելու համար միացեք մեզ Ֆեյսբուքում՝ https://www.facebook.com/MTSArmenia/**

## ՀԱՄԱՌՈՏ

### ՌԴ-ԱՄՆ համագործակցություն, բայց... Երկրից դուրս

ՌԴ նախագահ **Վլադիմիր Պուտինը** հայտարարել է, որ Ռուսաստանը պատրաստ է ԱՄՆ-ի հետ լայն գործակցություն ծավալել տիեզերական ծրագրերն իրականացնելիս՝ տիեզերքում:

Թրամփը դեռ չի պատասխանել Պուտինին, բայց եթե այդ պատասխանը դրական լինի, ապա կստացվի, որ ԱՄՆ-ն ու Ռուսաստանը լայն գործակցություն են ծավալում, բայց տիեզերքում. Երկիր մոլորակում չի ստացվում:

### Պուտին. «Թիլերսոնը վատ միջավայր է ընկել»

ՌԴ նախագահ **Վլադիմիր Պուտինն** Արեւելյան տնտեսական ֆորումի լիագումար նիստի ընթացքում հայտարարել է, որ ԱՄՆ պետքարտուղար Ռեքս Թիլերսոնը «վատ միջավայր է ընկել»:

Պուտինը շեշտել է, որ Ռուսաստանը ժամանակին շքանշան է հանձնել ԱՄՆ-ի ներկայիս պետքարտուղարին, իսկ այժմ «նա խուզարկումներ է կազմակերպում մեր հյուպատոսարաններում»: ՌԴ նախագահը, սակայն, հույս է հայտնել, որ «փոխգործակցության քամին Թիլերսոնին անհրաժեշտ ուղու վրա կդնի»: Պուտինի խոսքով՝ չնայած այդ ամենին Ռուսաստանը շարունակում է համագործակցել Թիլերսոնի նախկին՝ ExxonMobil ընկերության հետ:

### «Ախր ես ձեզ ի՞նչ եմ արել». Էրդողան

Դիմելով եվրոպացի քաղաքական գործիչներին՝ Թուրքիայի նախագահ Էրդողանը ասել է. «Ախր ես ձեզ ի՞նչ եմ արել»: Էրդողանն իր տարակուսանքն է հայտնել տարբեր եվրոպական երկրներում, մասնավորաբար՝ Գերմանիայում հակաթուրքական դեմարշի հետ կապված: Ի դեպ, Գերմանիայի կանցլերի նախընտրական քարոզարշավում հիմնական մրցակիցներ, գործող կանցլեր Մերկելն ու Շուլցը միակարծիք են բացառապես հակաթուրքական դաշտում: Մերկելն օրինակ հայտարարել է, թե ինքը միշտ էլ դեմ է եղել Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցությանը, իսկ Շուլցը նշել է, որ եթե ինքը կանցլեր դառնա, ապա կկասեցնի ԵՄ-Թուրքիա բանակցությունները, որոնց դեմ է հանդես գալիս նաեւ Ավստրիան:

Իսկ Էրդողանին հավանաբար լավ հոգեբան է պետք. մարդը անում է, հետո չի հիշում, թե ինչ է արել:

### Խեցգետնի հետ՝ զգույշ

Կառավարության նիստում վարչապետ **Կարեն Կարապետյանը** բնապահպանության նախարարությանը հանձնարարել է՝ խիստ վերահսկել Սեւանում խեցգետնի որսը, քանի որ «խեցգետինը պակասել է»: Այն խեցգետնաորսորդներն էլ, որոնց տրվել էր որսի իրավունք, այդ իրավունքը երկարաձգելու հնարավորություն չպետք է ունենան:

Վարչապետը չասաց, թե ի՞նչ պետք է անեն այն գարեջուր խմողները, երբ խեցգետինը պակասում է նրանց սեղանից, հատկապես «Գյումրի» գարեջուրը:


## Վաճառվում է

**3 սեն. բն. ՀԱԹ Բ-4 թաղամասում: 1-ին հարկ, 70 ք.մ, ունի նկուղ (մուտքը տանից): Խոհանոցն ու միջանցքը սալիկապատ, խողովակաշարն առանձնացրած: Ունի վերանորոգման կարիք: Արժեքը 36.000 դոլարին համարժեք դրամ: (Կարող է վաճառվել նաեւ ավտոտնակի հետ միասին):**

Հեռ.՝ 74-28-48 (երեկոյան ժամերին), բջջ.՝ 094-19-06-02:



«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԵ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010


ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 25.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 7.09.2017, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: